

34-

(118)

ԿԱԹՈՒՂԵԿԱՍՎԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

(1908 թ. Հոկտ. 30, 31 և նոյեմբ. 1)

ԲԱՐԴՈՒՂԻՄՔՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

ՀԱՆԴԵՊ ԿԱԹՈՒՂԵԿԱՍՎԱՆ ՀՆՑՐ. ՊԱՑԴԱՄԱԻՈՐԱՅ
ԺՈՂՈՎԻ ԵԽ Ս. ԷջՄԻԱՃՆԻ ՍԻՆՈԴԻ

ՅԱԻԵԼՈՒԱԾ

«ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ»Ի ԱՐԹԻՒ

281.69.
4-47.

Տպարան «ՇիրԱկ» Ալէքսանդրապոլ

1909

(76)

981.6 գ.
գ-47

Տեղայիշտ պ. և Անդրբաշխ շրջան:

Գեորգիակա Բարդուղիմնեա:

ԿԱԹՈՒՂԻԿԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵՒՆԸ

(1908 Հոկտ. 30, 31 և Նոյեմբ. 1)

ԲԱՐԴՈՒՂԻՄՔՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

ՀԱՆԴԵՊ ԿԱԹՈՒՂԻԿԱՆԱԿԱՆ ՀՆՏՐ. ՊԱԺԱՄԱՀՈՐԱՅ-
ԺՈՂՈՎԻ ԵՒ Ա. Է. ՋԱՄԱՃՆԻ ՍԻՆՈԴԻ

Տպարան «ՇիրԱկ» Ալյոսհանդրապօլ 1909 թ. Յունվար (76)

Կ Ա Թ Ո Ւ Ղ Ե Կ Ո Ս Ս Կ Ա Ն Ը Ն Տ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Բ

(1908 թ. Հոկտ. 30, 31 և Նոյեմբ. 1)

Քարդուղիմէոս եպիսկոպոսը հանդէալ Կաթոլիկ ընտ. Պատ-
գամատրաց Ժողովի եւ Ս. Էջմիածնի Սինօդի:

I

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան Պատգամաւո-
րաց պաշտօնական նիստերում և արարողութեանց ժամանակ
(1908 թ. Հոկտ. 30, 31 և Նոյեմբ. 1-ին) բացակայում էին առողջ
միտքը և օրինական կարգերը, մասաւանդ նիստերի՝ զեկավարնե-
րը—Տեղապահ և Պրօկուրօր՝ չէին ըմբռնել ընտրութեան առնա-
նարակ օրէնքները:

Բայց ես այժմ պիտի ընթերցողին ներկայացնեմ միայն այն
անկանոնութիւնները և ապօրինութիւնները, — ես և որոնք առըն-
չութիւն ունին կամ յիշուած են առաջինների հետ, — որոնց մա-
սին առ ժաման և առ տեղեաւն Ժողովին և Ժողովի Ղեկավարնե-
րին բանիւ և գրով գիտողութիւններ արուեցին:

Հոկտ. 30-ին, առաւօտեան 9 ժամին, Տաճարի զանգակների
(Երբորդը) ազգարութեամբ շտապեցինք Շոգեորական և աշ-
խարհական պատգամաւորներս Վեհարանի գահին Այստեղ Մի-
նօդի անդամ Մատթ. վարդապետը մի թերթ ձեռքին բռնած բար-
ձրածայն կարգաց ի լուր՝ թէ ինչ կարգով պատգամաւորներս
պիտի շաբաթինք և հանդիսաւոր ընթացք կազմելով գնանք Տաճա-
րը: Եթէ նա կարգում էր անունները՝ պատգամաւորները ըստ
այնմ գուրս էին ելնում և շարունակ: Թափօրի առաջից պիտի գլ-

— Այդպիսի անմիտ կանոն չի կարող լինել, ասացի, բնչ պէս կարելի է որ քահանան եպիսկոպոսներից բարձր տեղ բռնէ, Կանոնի անունով էք խօսում առանց ի նկատի առնելու որ հէնց Պօլոժէնիան, թող եկեղեցական կարգերը, ձեռնադրութեամբ աւագութեանն է նախամեծաբութիւն տալիս: Եթէ այսօր Սուրէնեանցըն է նախանդամ Սինօդի կամ Տեղապահ, և ոչ Շիրակունին՝ որ Սուրէնեանցից առաջ անզամ էր Սինօդի, այդ այն միակ պատճառու է՝ որ Սուրէնեանցը առաջ է եպիսկոպոս ձեռնադրութեամբ...

Պրօկուրօրը զնաց: Ես առա միայնակ զնացի Տաճարը:

Երեկոյեան հրաւիրեցի Աւագ լուսարար Տ. Ղեռնդ հպիսկոպոսին: Սա ևս, իրեկ «Կարգադրիչ Յանձնաժողովի» նախագահ՝ կանոնի անունով խօսեց, այլ և գնաց բերեց նոր տպագրուած «Կանոնք» կոչուած տետրակը, ուսւելէն և հայերէն, և ցոյց տուեց կապոյտ մատիտով էլ եղերքի կէսը գծուած 12-րդ յօդուածը: Ես չէր տեսել այդ տետրակը: Կարգացի ամբողջ յօդուածը, բայց, և՛ դարձմանք, հէնց այդ կանոնն է պատուիրում, որ պէտք է գնան Տաճարը կամ նստեն ֆողովում՝ միշտ էլ «ըս աւագութեան աս տինաճի ձեռնադրութեանն», իսկ մեր Սինօդը, Պրօկուրօրը և կարգադրիչ Յանձնաժողովը՝ չէին հասկացել այդքան պարզ բանը *), չէին հասկացել՝ ինչպէս պարզուեց գորանց պատճառաբանութիւնից, որովհետեւ կանոնի մէջ «Անդամք Սինօդի» բառերը առաջ են գրուած, իսկ «Կօթն երիցագոյն եպիսկոպոսունք տեղոյն»՝ Միաբանութեան պատգամաւորները՝ յետոյ: Արգէս թէ Սինօդի անդամների մէջ չէին կարող լինի կամ չկան ձեռնադրութեամբ աւագներ և ընդհակառակներ...

Եկեղեցական կարգապահութեան մասին խօսելուց յետոյ, կարմիր մատիտով գծեցի նոյն 12-րդ յօդուածի վերջին մասը, ևս

*) Կարգադրիչ Յանձնաժողովի նախագահ՝ և անդամներ էին Ղեռնդ եպս., Մատթէոս և Խորէն վարդապետները, ձեմ. Տեսուչ պ. Մինաս Բէրբէրեանը և գիւղատնես Կոսա. Մէլիք-Շահնացարեանցը:

Նային Տ. Տեղապահը և Կառավարութեան ներկայացուցիչը*), ապա Երուսաղէմի Պատրիարքի, Աղթամարի կաթողիկոսական և կ. Պօլոյ պատրիարքական Տեղապահների պատգամաւորները, ապա Էջմիածնի Միուսաստանի հայ թեմերի Առաջնորդները, ապա Էջմիածնի Սինօդի անդամները, ապա արտասահմանեան հոգևորական պատգամաւորները—ամենաւագագոյները (վարդապետներ, արեգաներ և քահանաներ), ապա Ա. Էջմիածնի Միաբանութեան եօթն պատգամաւորներս—ամենաւագագոյները եպիսկոպոսական դասի և վարդապետների մէջ, և ապա աշխարհական պատգամաւորները: Այսպէս, երբ գնացու կարգը հասաւ Միաբանութեան եօթն պատգամաւորներիս, Մեսրով, Սուրբիան և Գրիգոր արքեպիսկոպոսները հեզ գաների պէս գլուխները քարոշ կանցին, կարգը իմն էր գնացու՝ բայց դարձայ Մատթ. Վարդապետին.—Ո՞վ է ձեզ իրաւունք տուել՝ երէկուայ աքեղաներից և քահանաներից էլ յետին տեղը տալ արքեպիսկոպոսներին. գուք թերմա չէիք ծնուել՝ երբ Մեսրովը և Սուրբիան եպիսկոպոսներ էին:

— Կանոնն է այդպէս կարգադրում, ես ինչ մեզաւոր եմ:

— Ո՞ւ կանոնը: Զի կարող եկեղեցոյ սրբագործած կարգը խախտող այդպիսի կանոն լինել, հէնց Պօլոժէնիան ևս ձեռնադրութեամբ աւագութեանն է առաջնութիւն տալիս: Ես չեմ կարող հնթարկուել եկեղեցոյ նորիրապետութեան և մեզ վիրաւորանք հասցնող այդպիսի մի կարգադրութեան: Ասացի և անցայ միւս գահին: Միախները և աշխարհական պատգամաւորները գնացին ի հարկէ:

Այս գահինութիւն էր մի յետ մնացած և տնծանօթ աշխարհական պատգամաւոր և պ. Նահանգապետի մի պաշտօնեայ—Քալանթարեանց ազգանունով: Իսկոյն մտաւ և Սինօդի Պրօկուրօր պ. Մէլիք-Օհանջանեանցը: Սա էլ ոչ աւել և ոչ պակաս քան Մատթ. Վարդապետը՝ ասաց: «Կանոնն է այդպէս կարգադրում»:

*) Նախորդ Ընտրութիւնոց ժամանակ կառ. ներկայացուցիչներ, լինուեմ էին քաղաքացիական պաշտօնեաներից, բայց այս անգամ Երևանի պ. Նահանգապետն էր:

Ա 14-րդ յօդուածին նոյնպէս «ըստ աւագութեան ձեռնադրութեան» շեշտող բառերը, և նախ հասկացնելով՝ ասացի. «Տարեք ցոյց տուէք Տեղապահին, ասացէք թող լաւ կարգայ, և վազը չկրկնուի այս աւուր կատարուած անկարգութիւնը։ Պատասխանատու է»։

Քիչ յետոյ վերադառն կեռող եպիսկոպոսը և ասաց. «Տեղապահի մօտ ուրիշնիր էլ կային, կարգացին և համոզուեցին՝ որ ձեր ասածն ուղիղ է եղել. Վազուանից պիտի ասուի որ իւրաքանչիւրը իւր ձեռնադրութեան կարգավ տեղ բռնէ», Այդպէս էլ արեցին։

Աճա այդ կոմոնները. —

Յօդ. 12. Մուտն իջանարն կատարի այսուկարգաւ. յառաջոյ ընթանայ կատարողն պաշտաման Պատրիարք Կաթողիկոսի (երիցադոյն Անդամն Սինոդի), ապա պատգամաւորքն Պատրիարքաց Երուսալէմի, Սոյոյ, Աղթամարայ և Կ. Պօլոյ. զհետ նոցա երթան կարգաւ զոյգ զոյգ յաջմէ կողմանէ Անդամք Սինոդի Ս. Էջմիածնի և եօթն երիցադոյն եպիսկոպոսունք տեղւոյն՝ ուղեկցութեամբ Պրօկուրօրի Սինոդի, իսկ յահեկէ՝ թեմակալ եպիսկոպոսունք կամ պատգամաւորք նոցա, կարգաւ նոյնպէս զոյգ զոյգ ըստ աւագութեան աստիճանի ձեռնադրութեան նոցա*), և ապա զհետ նոցա երթան աշխարհական պատգամաւորքն, նոյնին իսկ կարգաւ...

Յօդ. 14. Ի միւսում աւուր կատարման այսր ծիսի ամենայն ներկայ եղեալըն և որք ունին զիրաւունս ընտրութեան Պատրիարք Կաթողիկոսի, զտեղիս, կալցին շուրջ զգրասեղանով, որ եղեալ կայ առաջի Տեղանոյ իջման Որդւոյն Միածնի (§ 9), ի միջավայրին կատարողն պաշտաման Պատրիարք Կաթուղիկոսի, յաջմէ կողմանէ փերոյիշեալ պատգամաւորք չորից Պատրիարքաց եւ բոլոր հոգեւուականի, որք ունին զիրաւունս ընա-

*.) Հնդգծութեան առհասարակ իմա են,

բելոյ զՊատրիարք Կաթուղիկոսն, ըստ աւագութեան ձեռնադրութեան իւրեանց, իսկ ի ձախմէ կողմանէ աշխարհական պատգամաւորք ըստ աւագութեան կոչման իւրեանց։

II

Միւս օրը, Հոկտ. 31-ին, առաւօտեան 9 ժամին եկեղեցոյ գանգակները հրաւիրեցին ընտրողներիս Վհհարան, որտեղից պիտի դարձեալ թափօրով գնայինք Տաճարը. Չնայելով որ ասել էին թէ երէկուայ սխալը այսօր ուղել էին, բայց ես ուղղակի գնացի Տաճարը, նստեցի իմ աթոռում. իւրաքանչիւրի անունը գրած գրուած էր սեղանի վերայ իւր առաջ: Եկաւ թափօրը, նըստեցին ամենը իրենց յատկացըած տթուներում։ «ըստ աւագութեան ձեռնադրութեան» ի հարկէ, Կարգացուեց սահմանեալ ազօթքը, ապա Տեղապահը համաթառ քարոզ խօսեց և յորդորեց ընտրողներին՝ խղճիմտօք լնարել արժանաւորագոյն թեկնածուներ Կաթուղիկոսութեան, և յայտարարւեց ժողովը բացուած: Պրօկուրօրը կարգաց Փոխարքայի պաշտօնակատարի առաջադրութիւնը ժողովի բացման մասին, իսկ Սինոդի Ատենադպիրը՝ հայ եկեղեցոյ եպիսկոպոսաց ընդհանուր ցուցակը:

Կանգնեց Տ. Մուրիսաս արքեպիսկոպոսը, ընարան առնելով «Քահանանց իորայէլի, խօսեցարուք ի միրա Երուսաղէմի», ըսկեց ատենարանել սակայն Պրօկուրօրը ցփոթուած, որպէս թէ մի սրբապղծութիւն, լինէր կատարուելիս, խիստ տհաճ և ցամանութիւնով ընդհատեց նորան, ուսւերէն լեզուով, զոր ես ափսնս որ չեմ հասկացել: Մուքիսաս սրբազնը կիսաշփոթուած՝ շարունակեց, Պրօկուրօրը դարձեալ ընդհատեց և խանգարեց նորան: Մուրիսասը, արգէն ընկճուած՝ խղճալի ձայնով և ձեռքը պարզելով ասաց. «Թողէք վերջացնեմ», և հէնց թերի, ինչպէս տեսանք, խուճապով վերջացրեց և նստեց: Այս գէպում և առհասարակ աչքի էր ընկնում՝ որ ժողովին դէ ֆակտո նախադահում էր Պրօկուրօրը: Դորան նպաստում էր և նորան յատկացըրուած տեղը ժողովաւմ. նա, Նահանչ-

գաղետի հետ, իւր Ատենադպիր և երկու զբագիրներով, յետոյք մեռը գէպի իջման Սեղանը բազմած՝ թանում էր ժողովի պրեզիդիումի դիրք։ Այս, բացակայում էին առողջ միտքը և օրինական կարգերը։

Սուքիաս արքեպիսկոպոսի ասածն էր. ա) Քանի որ ճանապարհների և գրաւոր հալորդակցութեան միջոցները զիւրացել են, Կաթուղիկոսի մահից յետոյ ընտրութիւնը մի ամբողջ տարավ յետաձգելը՝ չափական երկայն է, 4—5 ամիսն էլ բաւական կը լինի։ բ) Ռուսաստանի և Տաճկաստանի հայ ժողովրդի թուերի համեմատութեամբ՝ շատ են քան զշափն Տաճկաստանի պատգամաւորները և ճնշող մեծամասնութիւն են կազմում։ գ) Պատգամաւորները գալիս են իջմիածին՝ արդէն իրենց կաթուղիկոսացուն ընտրած, փոխանակ այստեղ խորհրդակցներուց յետոյ ըստ այնմ ընտրելու։ դ) Ինչո՞ւ Երուսաղէմի Յարութիւն Պատրիարքի պատգամաւորին հետագրով փոխել տուին։

Պրօկուրօրը միշտ խօսում էր ոռւսերէն, մեծամասնութեան համար անհասկանալի լեզուով. պահանջուեց որ թարգմանուի հայերէն, այնուհետև Առեւազպիրը բարձրածայն թարգմանում էր։ Պրօկուրօրն ասաց. - Այժմ փոքրերից կը սկսինք ձայները հաւաքել չորս թեկնածուներ ընտրելու համար, թեկնածուների անունները կարձանագրուի ոռւսերէն և հայերէն և ամեն մի ընտրող կը ստորագրէ^{*)}։ Սուքիաս արքեպիսկոպոսը և Յակով եպիսկոպոսը, միւս կողմից էլ աշխարհական միշերկու պատգամաւորներ պատասխանեցին. ինչո՞ւ պիտի ոռւսերէն լինի, մինչև այժմ չէ եղել։

Պրօկուրօրը նշան տուից և Առենադպիրը իսկոյն 1892 թուի կաթուղիկոսական ընտրութեան ստուար գործը դրեց առաջները և ցոյց տուեց, որ այն ժամանակի արձանագրութիւնը եղած էր ոռուներէն առանձին և հայերէն առանձին, որոնց և ստորագրել էին ընտրողները։ Սուքիաս արքեպիս. ձեռքի և գլխի շուարժան նշանի հետ դժգոհելով՝ ասաց. «առաջ այդպիսի բան չկար»։ Եւ

^{*)} «Փոքրերից»—այսինքն աշխարհական պատգամաւորներց սկսած։

լոեցին, վերջացած համարկելով։ 1892 թ. Կաթուղիկոսական ընտրութեան մասնակցող Պարսկա-Հնդկաստանի պատգամաւոր Հ. Առաքելական էլ լուս էր, այն ինչ հէնց իւր ներկայութեամբ Գր. Արծրունու և «խամախոների» բարեհաճ օժանդակութեամբն է կատարուել այդ օրէնքից գուրս նորմաւծութիւնը։

Կանգնեցի և ասացի. 92-ի ընտրութեան ես պատգամաւոր չեմ եղել, սակայն գորա մասին և ժամանակին իմ լսածն ու գիտեցածը այժմ լաւ յիշում եմ. — Այս ժամանակուայ Պր. Կանչելին ժողովին առաջարկում է ոռուներէն կազմել, բայց չեն համաձայնում պատգամաւորները, գիմադրում են (Օրմանեան, Կիւմիւշկերտան, Արգար Յովհաննիսեան և այլք), որովհետև այդպիսի օրէնք չկայ. Կանչելին չկարողանալով պնդել՝ ասում է. «Կազմենք առանձին հայերէն և ասանձին ոռուներէն, հայերէնը՝ գործի համար, իսկ ոռունը՝ միայն ինձ համար, հարկաւոր դէպում պաշտօնական անձանց ցոյց տալու համար։ Պատգամաւորներից սասրագրութիւնը ոռուներէնի տակ պէտք է, որպէսզի չկասկածուի թէ իմ շինած բան է»։ Ահա իմ գիտեցածը գորա մասին։ Ուրիմն ոռուներէնը՝ միայն Պրօկուրօրի համար է, ժողովի գործի համար պարտաւորական չէ։ Եւ նստեցի*）։

Պրօկուրօրը խիստ ուրախացած՝ շտապեց նստած տեղից կօմպլիմէնաներ անել ինձ—«հէնց այդպէս է, հէնց այդպէս է»։

Ամենքը մնացին լուս, կարծես թէ բաւականացած կանչելու պատճառաբանութեամբը։ Այս ինչ՝ պ. Կանչելուն կամ առհասա-

^{*)} Գր. Արծրունին, Տփխիսի թեմի 1892 թ. Մարտի 8-ի պատգամաւորական ընտրութեան սմօթալի միջոցներով Սինօդում թեկանել տալու համար, և որից յետոյ ինքը պատգամաւոր ընտրուելով՝ այնքան երախտապարտ կանչելուն, ժողովում կանգնում ընդդիմախօսում է Արգարին՝ յօդուտ կանչելու այդ ապօրինի առաջարկութեան, և իւր «խամախոների» ընդունել տալիս ժողովին։ Արքեպիսկոպոսներ Սմբատեանց, Օրմանեանց, Խապայեանց, Վահան վարդապետ եւ այլք կեռ ևս կենդանի վկաներ են։

բակ Մինօդի՝ Պրօկուրօրներին պիտոյանալու համար՝ կարող էր Մինօդից տրուել նոցա վաւերացրած պատճէն՝ թարգմանութիւնը, վոխանակ օրէնքի հակառակ հոր բան մտցնելու ընտրուկան գործափառութեան մէջ, որին մասնակցող պատգամաւորների մեծամասնութիւնը օտարահպատակներ լիներով խխա զայթակուուն ուսաւցման քաղաքականութիւնից Գոնէ ինձ համար այդ ուսւաերէնի հարցը յանկարծ առաջ նկատ, իսկ միւսների՝ չզիտեմ: Ես իմ կողմից ասած՝ պատմածն բաւական համարեցի, յուսալով որ մեր ասպետ և իրաւաբան պատգամաւորները այդպիսի մի կարգինալ խնդրի մասին պիտի խօսին պատշաճօրէն և ազնուալէս, բայց իզուր եւ այլ հարցերում նկատեցի որ դոքա բրենց տիրոջ լակում տանու հաւ ու ճուտերին որսացող խեղով բազէի տեսակիցն են եղել: (Քակար եպս: Բարինուգարեանի պատմած ինչ որ Մէլիքի բաղէն):

Անմիջապէս շտապով ձեռնարկեցին ձայտութեան: — Ես Պարս կաստանի և Հնդկանանի՝ Հայոց աշխարհական պատգամաւորս ընտրում եմ կաթուղիկոսական առաջին թեկնածու: Մատթէսո արքեպիսկոպոս Իրմիրեանին, երկրորդ՝ Եղիշէ եպիս. Դուրեանին, երրորդ՝ Մեսրովը արքեպիս. Սմբատեանցին, չորրորդ՝ Յովհաննէս: Արքեպիս: Շիրակունուն:

Շիրակունին հրաժարուեց քուէարկուել քաջ գիտենալով որ գնում են նեացներու համար, կամ գուցէ ուրիշ զիտումով: Սորա փոխանակ գրեցին Գրիգոր արքեպիս. Գառնակերեանցին: Պատշամաւորի առաջարկած անունները Պրօկուրօրը կրում էր ուսիրէն, իսկ նախագահի սեղանի վերայ մի գրագիր գրում էր նոյն անունները հայերէն, առա պատգամաւորը գնաց ստորագրեց և հայերէնին և ուսւերէնին: Այդ ժամանակ ես ասացի: — Պէտք է ուսւերէնի մասին իմ բացատրութիւնը գոնէ այժմ արձանագրել որպէսզի ապագայ ընտրութիւնների համար յայտնի լինի — չը մուացրէ թէ ինչպէս է մաել ուսւերէնը և ինչ նշանակութիւն ունի, Ժողովը հաւասութիւն տուեց իմ առաջարկութեանը: Պրօկուրօրը և Ասենագալիրը խօսը տուին ժողովին՝ արձանագրել յետոյ:

Շաբունակեցին ձայնաւութիւնը՝ Երրորդ պատգամաւորի ձայնաւութիւնից յետոյ մի-երկու պատգամաւորներ՝ ինչպէս Սպանդարեանց և Գ. Չուբար, հարց բարձրացրին թէ Սմբատեանց և Փանակերեանցն էլ կարող են հրաժարուելու Սամսոն Յարութիւնները ասաց: «Արձանագրութիւն կը կազմենք, հրաժարուողների մասին»: Զուբարը դուրս եկաւ առաջ և խօսեց այն մաքով թէ հրաժարուել — չիրաժարուելը քուէարկուողի հաճաթիւնիցն է կախուած: Կանգնեցի պատասխանեցի Զուբարին: — Նիրակունին հրաժարուեց նէնց սկզբից նա իրաւունք ունի, իսկ միւսները, որ նոյնպէս ներկայ էին, որպէսնեակ սկզբից չիրաժարուեցին քուէարկուելուց, այժմ հիմէ հրաժարուին՝ կը նշանակէ փորձել խանչ գարել քուէարկութիւնը, ուրիմն այդ օրինաւոր չի լինի և իրաւունք չունին հրաժարուելու: Նէնց այս է պատճառը, որ եթէ ընտրուողը ներկայ չի լինում: Հարկաւոր է համարում նախապէս ունենալ նորա գրաւոր համաձայնութիւնը, որպէս զի յետոյ չը հրաժարուի:

Վասիլ Եղիազարեանց: Ուրեմն նախ պէտք է բացակայ ընտրուողների — Խզմիրլեանի և Դուրեանի գրաւոր համաձայնութիւնը ունենալու*):

) Վաս. Եղ. պատգամաւոր Երեանեան թեմի, Սեպտ. 21-ին Երեանում Պատուիրակների ժաղովում (45 հոգի), բերելով նոյն այս օրինական պատճառաբանութիւնը թէ՝ «Բացակայ թեկնածուի գրաւոր համաձայնութիւնը պէտք է» արգելը են զանում Ա. Ահարոնեանի և այլոց թեկնածութեան քուէտուփերը զնելուն: Կուսակցողները առաջարկում են յետուածզել ընտրութիւնը մի ծրով՝ մինչև ստացնեի գրաւոր համաձայնութիւնը: Քուէարկութեամբ մերժում է: Օնքաւականները, 17 հոգի, բողոքում և հեռանում են ժողովից, բողոքում են և Սինօդին, իսկ միւսները, թէն չնչին մեծամասնութիւն կազմելով, շարունակում և կայացընում են ընտրութիւնը: Ընտրուում է պատգամաւոր այդ պարունը՝ 17 ձայնով ընդդէմ 8-ի: Մինօդը ճանաչեց այդ ընտրութիւնը վաւերական: (Տես «Մշակ» № 213):

Այդ արդէն ժողովի և Պրօկուրօրի գործն է. ասացի և նըստեցի: Պրօկուրօրը հաստատեց իմ ասածը, թէ Սմբատիանց եւ Գառնակերեանցը այլևս իրաւունք չունին հրաժարուելու:

Հինգերորդ թէ վեցերորդ պատգամաւորի (Կուտինայի) ձայնաւութիւնից առաջ կանգնեցի և ասացի. Թեկնածուների մասին չխօսուեց, ես ցանկանում իմ իմ թեկնածուների մասին սեպհական կարծիք յայտնել՝ նախքան բառանուն ցանկի կազմուելը:

Պրօկառօր. Օրէնքով ձայները ժողովւում է փոքրիրից՝ որպէսզի մեծերի կարծիքը ճնշումն չգործէ փոքրերի վերայ (??!), ուստի դուք կարող էք կարծիք յայտնել՝ ելք կը համի ձեր ձայնի տալու հերթը:

Պարոնը դարձեալ օրէնքի անունով խօսեց: Ես իսկոյն նայեցի ընտրութեան կանոնները և ասացի. Մինչև ձայնի տալու հերթը ինձ հասնի՝ բառանուն ցանկը կազմուած պիտի համարուի, իսկ իմ յայտնած կարծիքը էլ ինչի՞ պիտի պէտք գայ, ճաշից յետոյ մանանէի: Ընտրութեան 16 և 17-րդ յօդուածներին նայելով՝ պատգամուորը իրաւունք ունի և պարտականութիւն՝ թեկնածուների մասին կարծիք յայտնել: Ամենքը իրենց ընտրելիների մասին կարծիք արդէն կազմել են, բայց եթէ պատահի որ մինը ուրիշի ուղիղ կարծիքը լսելուց յետոյ փոխէ իր գարծիքը՝ վատ չի լինի, հէսց օրէնքի պահանջն էլ այդ է, քան «մեծերին» — եպիսկոպոսներին կամ արքեպիսկոպոսներին զրկել կաթուղիկոսական թեկնածուների մասին սեպհական կարծիք յայտնելուց:

Պրօկուրօրը ձգեց Նախագահին պատասխանել, բայց վերջինը լուր էր: Մի շաբաթում էինք նստած և բաւական հեռու, 7—8 հոգի բաժանում էին իմ ու նորա մէջ, յարմարութիւն չկար ասելու կամ լսելու, ուստի զնացի նորա սեղանի մօտ, կրկնեցի իմ առաջարկութիւնը և Պրօկուրօրի պատասխանը, ցանկութիւն յայտնեցի կարդալ ի լուր 16 և 17-րդ յօդուածները՝ ցոյց տալու համար թէ Պրօկուրօրը սխալում է: Այն կողմից մինը, կարծեամ Ա. Յարութիւնենը, մէջ ընկաւ. «Կանոնները գիտենք, պէտք չէ կարդալ»:

Ամեն քայլում դառնապէս զգացւում էր Նախագահի աեղի տալը ազդեցիկներին:

Եթէ կանոնները գիտէք, ասացի, այդ հո աւելի լաւ Սըրազան Նախագահ, ես ցանկանում եմ սեպհական կարծիքս յայտնել իմ թեկնածուների մասին: Նախագահը ամենայն անտարբերութեամբ պատասխանեց. «Ձեր քուէն տալու հերթին կը յայտնէք ձեր կարծիքը»: Նոյն անհեթեթ և օրէնքի հակառակ պատասխանը՝ ինչ որ ասել էր Պրօկուրօրը: Լուս վերադարձայ նստեցի իմ տեղում:

Ահա և այն յօդուածները.—

Յօդ. 16. Իւրաքանչիւր ոք ի ժողովականացն տայ բգկարծիս իւր (մհենի) վասն ընտրութեան աւագագոյն թեկնածուաց ազատօնէն, ըստ ուղիղ հասկացողութեան իւրում, ըստ մաքուր խղճի մտաց, տուանց իրիք երկիւղի, և ոչ հայելով յառաջարկութիւն ինչ կողմնակի կամ ի գրութիւն մասնաւոր, թէկ իցէ այն ի պատուաւորագոյն անձանց յազգէն Հայոց. ամենայն ոք վարի այնպէս, զի կարասցէ տալ պատասխանի յամենայնի առաջի Տեառն Աստուծոյ: Ուստի եւ իւրաքանչիւր ոք ի բաց մերժելով զամենայն յամառութիւն կարծեաց եւ անձին՝ զանացի տեսանել ի կարծիս հանուց զիաստաւուն հիմն հօմարտութեան*):

Յօդ. 17. Իւրաքանչիւր անդամ ժողովոյն զկարծիս իւր պարտի արտայայտել համառօտ, պարզ, ոչ հեռանալով առհասարակ յիսկական առարկայէն, յանդիման առենել նախ՝ զարժանաւութիւն բարձրաստինան նազեւուականի առաջարկելոյն յինքենէ, ապա զապացուցութիւնա եւ վերջապէս զակնկալեալի ի նմանէ քուտ վասն եկեղեց: ոյ:

*) Այս միևնոյնը օրէնք է կայսերական բոլոր կօլեգիալ հաստատութեանց համար, տես օրէնսդիրք II հատոր. Ա. մասին, յօդ. 147:

Վերջապէս հասաւ իմ ձայնի տալու հերթը նախ դիտել տալով կատարուած տպօրինութեան մասին, տուի իմ ձայնը Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանին, լւելով սորու մասին գործնական խիստ մեծ կարեռութիւն ունեցող ասելիքս: Այդև չուսի իմ երկրորդ ընտրելիի անունը, աւելարդ համարելով՝ քանի որ բառանուն ցանկը գրեթէ կազմուած էր արդէն Միայն յաւելացրի: «Ես էջմիածնի մասին էի մտածում: Եթէ խօսեցած լինէին կարծում եմ մի աստիճան ապահոված կը լինէի Իզմիրլեանի կաթողիկոսացումը: իսկ իմ երկրորդ ընտրելին՝ մի քանի կողմերով առաւելութիւն ունէի Իզմիրլեանից»:

Արգէն ձայնուութիւնը մօս էր վերջանալու: Իզմիրլեանին բոլոր ընտրողները ձայն տուին, բացի Սուքիաս արքեպիսկոպոսը: Խուրեանը՝ ստացաւ մեծամասնութեան ձայները, իսկ Մհարովը և Փրփոր արքեպիսկոպոսները՝ աւելի պակաս ձայներ, սակայն հաւասար: Սոցանով էլ փակուեց թեկնածուների բասանուն ցանկը, որպէս առաւելագոյն ձայներ ստացողներով: Օքմանեան և Յովակիմեան արքեպիսկոպոսներն են ստացան մի քանի ձայներ, միմի ձայն էլ ստացան երիցեան, Սանգալճեան, Սափրիճեան և ուրիշ եպիսկոպոսներ: Բայց պէտք է չմոռանալ՝ ու ո՛չ մի ընտրով ո՛չ մի կարծիք շլայսեց—չխօսեց քեկնածուների մասին: Նիստը արձակուեց $\frac{3}{2}$ ժամին:

III

Քառակուն ցանկի կազմուելուց յետոյ՝ ընտրութեան արդիւքն արգէն վճռուած էր և ապահով, քանի որ նոյն ընտրողներն էին և ուրիշ նոր ընտրելի էլ չէր կարելի մէջ բերել: մնում էր նոյեմբերի 12-ին լոկ ձևականութիւն կատարած լինելու համար ըուէարկել քառանուն ցանկից կաթուղիկոսացու երկու կանդիդատները որոշելու համար: Այդ օրը, նոյնաէս առաւոտեան 9 ժամին Տաճարի զանգակների ազդարարութեամբ պատգամաւորները գնացին՝ բայց նախ սեղանաւունը նախաճաշելու և ապա Վեհարան, որտեղից թափոր կազմելով եկան Տաճարը, ուր ես, ինչպէս նա-

խսրդ օրը, արգէն նստած էի աթոռում: Խակոյն, դեռ նիստը չը բացուած, մատեցայ նախակահին սեղանին: Վրեցի նորա տուաջ անձնական թղթոց ելից մտաեանս և Փառովին ուղղուած Յայտարարութիւնն ծրարը: Կա ստորագրեց մտեանում և ստացաւ ծըրարը, ես, անմիջապէս մեկնեցի: Ահա այդ Յայտարարութիւնը: Ամենայն ձայոց կաթուղիկոսի ընտրութեան Պատգամառարացուածար Փառովին:

Յայտարարութիւն.

Ի նկատի տոնելով որ սրբազն Տեղապահը և Սինօդի պարկութօրը, մին իրեւնախնագահ և ատենապետ կաթուղիկոսաւկան ընտրութեան Պատգամաւորաց Փողովի, և միւսը՝ իբրև օւրէնքների կատարման մասին պատասխանառու պաշտօնեայ, չեղուեցին որոշ և յայտնի կանոնի (յօդ. 12) գործադրութիւնից, ուրով գործով վիրաւորանք հասցըին եկեղ. Նուիրապետութեան բարձրաստիճան հոգեուրականաց—Մայր Աթոռոյ Միաբանութեան հօթն պատգամաւորներին: Տախով սորանց քահանաներից և ամբեղաներից էլ յետին տեղը Հոկտ. 30-ին գէպի Տաճարը հանդիպաւոր մուտքի ժամանակ: —Ի նկատի առնելով, ամենազլիաւորը, որ երէկո Հոկտ. 31-ին կաթուղիկոսական ընտրելեաց քառանուն ցանկը կազմելուց առաջ թէպէտ կարդացուեց հայ եկեղեցոյ: Եւ պիսկոպոսաց ընդհանուր ցուցակը առկայն առանց ընտրելեաց ցանկի կազմելուց դիմեցին ուղղակի չորս թեկնածուների քուէարձկութեան, ուր ես ցանկութիւն յայտնեցի իմ ընտրելիների մասին սեղանական կարծիքս յայտնել նախքան քառանուն ցանկի կազմուել: Պարոն Պակուղարը առարկեց իմ գէմ թէ: —Զայները ժողովում է փոքրերից՝ որպէսզի մեծերի կարծիքը ճնշումն չգործէ փոքրերի վերայ (ՅԱ), աւատի գուք՝ կարող էր կարծիք յայտնել՝ երբ կը համար անցնելով և ցոյց տալով ընտրութեան «կանոնք»-ի 16 և 17-րդ յօդուածները, որոնք կան պետական ընդհանուր օրէնսդրութեան մէջ, երկրորդ անգամ դիմեցի պ. Պակուրօրին և ասացի:

Զորս ընտրելեաց մասին իւրաքանչիւրը իւր կարծիքը արդէն կազմել է ներկայ ժողովից առաջ, բայց եթէ պատահի որ մէկը փոխէ իւր կարծիքը ուրիշի ուղիղ կարծիքը լսելուց յետոյ, վատ չի լինի, հէնց օրէնքի պահանջն էլ այդ է, բան «մեծերին»—հապիսկոպոսներին կամ արքեպիսկոպոսներին զրկել թեկնածուների մասին սեպհական կարծիք յայտնելուց: Պրօկուրութը թողեց Տեղապհանին պատասխանել, իսկ վերջինը՝ ամենայն անտարբերութեամբ պատասխանեց. «Ձեր քուէն տալու հերթին կը յայտնէք ձեր կարծիքը: Ամբողջ Պատգամաւորական ժողովը լսութեամբ համակերպութեց Նախագահի և Պրօկուրօրի՝ ըստ իս' ոչ—օրինական և տարօրինակ այս պատասխանին: Այսպէս, երբ հասաւ իմ ձայնի տալու հերթը, նախ դիտել տալով կատարուած անկանոնաւթեան մասին, իմ ձայնը տուի Մատթէոս արքեպիս. Իզմիրեանին, լոելով սորա մասին գործնական խիստ մեծ կարեորութիւն ունեցող ասելիքս, այլև չտուի իմ երկրորդ ընտրելիի անունը, չը յօժարելով ի հարկէ ըստ Նախագահի և Պրօկուրօրի թելագրութեան՝ «Ճաշից յետոյ մանանեխ մատուցանել»...

Արձանագրելով կատարուածը, այսու ամենայնիւ չհմ բողոքում, այլ՝ Յայտարարութեամբս խնդրում եմ ընդունել իմ ձայնը յօգուտ իմ միակ ընտրելի Մատթէոս արքեպիսկոպ. Իզմիրեանի թեկնածութեան՝ համաձայն ընտրութեան կասոնքի 21-րդ յօդուածի ծանօթութեան. Որովհեան, թէպէտ ինչ վերաբերում է ժողովի Նախագահի և պ. Պրօկուրօրի տկար ըմբռնողութեան ուրէնքների՝ և աւելի շօշափելի փաստեր ունիմ, տես իմ Յայտարարութիւնը Սինօդին՝ 14-ն Ապրիլի (և «Մշակ» № 78, 112 124) և ի 16-ն Սեպտեմբերի տարբյուս*), սակայն որ ընտրեալ Պատգամաւորաց համազգային ժողովը ևս իւր ամբողջութեամբ կարողէր համակերպուելով՝ իւր արժանի վեհութեան չհամապատասխանել երէկուայ նիստում համոզուեցի, ուստի Յայտարարութիւնս ժողովին անձամբ մատուցանելուց յետոյ մեկնելով՝ բացա-

*) Այդ Յայտարարութիւնները և յօդուածները տես վերջում:

կայում եմ այս աւուր վերջին ընտրութեան նիստից: 1-ն Նոյեմբերի 1908 թ., Ս. Էջմիածին:

Պատգամաւոր Միաբան. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի՝


Բարդ. եպիսկ. Գէորգեան (Ճուղութեանց):

Պատգամաւորաց հէնց նոյն նիստում կարգացւում է իմ այս Յայտարարութիւնը. վճառմ են «կցել ընդ գործյն»:

Այդ օրը և վերջացաւ յաջողութեամբ կաթուղիկոսական ընտրութիւնը, Իզմիրեան և Դուրեան յայտարարութեան աւագագոյն թեկնածուները. Մեկնեցին պատգամաւորները ուրախ արամագրութեամբ, Ուրախ էին կերպարանում և նորանք, որոնք հէնց Խրիմնանի մահից յետոյ և շարունակ ընտրում էին Սուլթանի ախորական Իզմիրեանին: Ուրախ էին կերպարանում և նորանք, որոնք Տաճկաստանի հայ հոգեւորականութեան մէջ չէին գտել և ոչ մի հաս արժանաւոր կաթուղիկոսացու: Բայց և ուրախ էին նորանք, որոնք միայն Յուլիսի 11-ից Օսմանեան Սահմանադրութեան հրատարակումից յետոյ ընտրում էին Իզմիրեանին: Բացի Օրմանեանի ընտրողներից մի քանիսը, որ, պէտք է ասել ի պահիւ նորանց, չէին կեղծում ուրախանում:

Իսկ մեր Ս. Էջմիածնի Միաբանութիւնը: — Սոքա էլ ուրախանալու պատճառներ շատ ունին: Ո՞ւմ է ճանաչում Իզմիրեանը կամ թէ կարող է ճանաչել լաւ կամ վատ կողմերից, նախ քան խարուելը: Կամ, ում հետ հին ու նոր խճճուած հաշիւներ ունի: Օտար է, հեշտ է նորա հետ, հէշ չէ Շաթիրի հետ սազուել: Այս ինչ ընական է որ մեզանում միմեանց քաջ ճանաշում են և, բայց սե նախանձը—«ոչ ինձ, ոչ քեզ», չկան որ ուղղակի կամ կողմանակի հաշիւներ չունենան Ռուսահայոց թէ հոգեւորական և թէ աշխարհական ընտրող պատգամաւորները: Ահա թէ ինչու «Եւ Դուրեանն ի մարգարէս»...

Պատգամաւորներ Ա. Քալանթար և Հ. Առաքելեան, լինելով
նոյն ընտրութեան մասնակիցներ՝ ականատես և քաջ գիտակ,



ամենասնբարեխիդճ կերպով այժմ աղաւազում են աշկարայ փաստերը և իրողութիւնները և ստախօսում իրենց թերթում, տես «Մշակ» № 244. Դոքա գրում նն. «Կարղացուեց Բարդուղիմէոս եպիսկոպոսի բողոքագիրը»:

—Ես տուել եմ Ժողովին ոչ բողոքագիր, այլ՝ «Յայտարարութիւն... արձանագրելով կատարուածը, այսուամենայնիւ չիմ բողոքում»—շեշտուած է: Յայտարարութիւն և նկատողութիւնները՝ չին նշանակում բողոք կամ «բողոքագիր»:

Դոքա գրում են՝ իբր թէ ես բողոքել եմ «որ վարդապետներ բարձր են նստում Ժողովում, քան արքեպիսկոպոսները»:

—Երբէք ոչ համարձակաւել է վարդապետ բարձր նաև եպիսկոպոսից և ոչ այդ մասին խօսք եմ արած: Մի վարդապետ, իբրև Աղթամարի Կաթ. Տեղապահի պատգամաւորը, նստել է այն տեղում, ուր նորան որպէս թէ արտօնում է ընտրութեան նախնաւանդ կարգը (տես յօդ. 12 և 14), և որի մասին խօսք չէր կարող լինել և չի հղել Թէպէտ այդ էլ յիշեալ կանոնների սխալ ըմբռնողութեամբն է սովորութիւն գարձել: Այս մասին քիչ յետոյ:

Գրում են, որ իմ Յայտարարութիւնը Ժողովում կարդացուեց յետոյ Ա. Քալանթարը ասել է. «Բարդուղիմէոս արքիսկոպոսի բողոքը» (?) կարծիքներ յայտնելու մասին ուզիղ կը լինէր, եթէ ձայնատութիւնից առաջ յանկացած լինէր կարծիքներ յայտնել, իսկ նա իւր յայտարարութիւնը արեց երբ արդէն ըստած էր ձայնատութիւնը»:

—Հաւանական ընտրելիներ (ընտրելիաց ցանկ) չ'անուանած չ'դրած ուղղակի դիմելը ձայնատութեան Ժողովականների և մասնաւանդ ղեկավարների խակութեան մի նոր սիւոպոիզն եղաւ ինձ համար, բացի միւս երեք անակնկալները, այսպէս որ չէի կարող աւելի առաջ առաջարկել թէ՝ նախքան քառանուն ցանկի կազմելը ցանկանում եմ իմ ընտրելիների մասին կարծիք յայտնել համաձայն ընտրութեան կանոնքի 16 և 17-րդ յօդուած-

ների*)։ Եւ սխալ էր ոչ թէ ձայնատութիւնը տակաւեին նոր սկսուած իմ պահանջելը՝ որ նախ խօսուի—կարծիքներ յայտնուի ընտրելիների մասին, քանի որ ոչ մի թեկնածուի մասին ո՛չ մի բառ չէր խօսուել, և ոչ խօսուեց, այլ, ընդհակառակն, սխալը այն էր և միանգամայն հակառակ օրէնքի և բանականութեան, որ ինչպէս նկատել եմ, առանց կարծիքներ յայտնուելու և, գոնէ ձևականորէն՝ հաւանական ընտրելիներ որոշելու դնելու՝ շատապավ դիմեցին ձայնատութեան:

Նոր սկսուած ձայնատութեան ընդմիջումն այս դէպքում պիտի ծառայէր Ժողովի սխալ գործառնութիւնը ուղղելուն: Եւ եթէ քառանուն ցանկ կազմելուց առաջ խօսուած լինէր թեկնածուների մասին և հաւանական ընտրելիներ անուանուէին, ինչպէս օրէնքն է տրամադրում և ինչպէս կասարուել են նախորդ ընտրութիւնները, բացի որ նիստը և ընտրութիւնը աւելի կանոնաւոր կը լինէր, ապդի ցանկալի ընտրելիի կողքին և յանարդանս՝ քառանուն ցանկի կազմելուս չէին թողլաւարուի կարգարոյծ և անդամարոյծ Սանդարձեան և Սափրիչեան եպիսկոպոսների անունները մացնել: Մանաւանդ որ Նախագահը և Պրօկուրօրը և սոցա հետառութեամբ համակերպուադ Պատգամաւորաց Ժագավը, ըստ որս և Քաղաքացարները, հոկտ. 31-ի նիստում ուրիշ, և աւելի անմիտ, առարկութեամբ զրկել են «մեծերին» իրենց թեկնածուների մասին կարծիքը յայտնելուց, ինչպէս տեսաւ այժմ և՛ ընթերցողը կամ, չէ որ ձայնատութիւնը գեն ևս չկանուած խօսել կարծիքներ յայտնել փորձող Սուրբիաս արքեպիսկոպոսին ևս պ. Պրօկուրօրը աշնքան քաղաքավարի կերպով խանգարել և վերջապէս լուեցրել է նոյն սխալ և օրէնքի հակառակ պատճառաւրանութեամբ՝ ինչով որ ինձ Քաջ սուսագէտ մի պատգամաւոր ներկայ Դեկտ. 2-ի նամակով իմ հարցին պատասխանում է. «Հոկտ. 31-ին Տաճարում Սուրբիաս

*) 78 ընտրութիւնից դեռ ևս 4 թէ. 5 հոգի էին տուել իրենց ձայները քառանուն ցանկի համար, երբ ես ցանկութիւն յայտնեցի կարծիք յայտնել:

արքեպիսկոպոսի բանախօսելը Պրօկուրօրը առաջին անգամն ընդունից մօտաւորապէս այս խօսքերով — «Օրէնքը չէ նախատեսած և թոյլատրած ժողովի Նախազահի բանախօսութիւնից յետոյ՝ ժողովականների կողմից խօսել ներկայ գտնուած պատգամաւորներին։ Որպէս զի նոքա ազատ լինեն իրենց գործողութեան մէջ՝ անմիջապէս պէտք է ձեռնարկեն ընտրութեան։ Իսկ երկրորդ անգամն՝ սոյն խօսքերով — «Սրբազն Սուքիասի բանախօսութիւնը այլ զէպքերում թերեւ կարեոր կը համարուէին, բայց երբ իրաքանչիւր պատգամաւոր իւր երգումն կնքած և գործի սկզբնաւորութեան նախապատրաստուած է՝ այսուհետեւ պէտք չէ աղդել նոցա վիրայ և թելագրել որ և է միտք, և այդ իսկ անի ի նկատի օրինական արգելրը» (?!): Ուրեմն։

Ուրեմն և՛ ոչ ձայնաւութիւնից առաջ, և՛ ոչ փոքրերից ըսկած, և՛ ոչ իրենց ձայնաւութեան հերթում՝ պատգամաւորները իրաւունք պիտի ունենան թեկնածուների մասին իրենց կարծիքը յայտնել որպէս զի «չ'ազգեն միւսների վերայ և չ'թելագրեն որ և է միտք։ Որպէսզի պատգամաւորները ազատ լինեն իրենց գործողութեան մէջ՝ անմիջապէս պէտք է ձեռնարկեն ընտրութեան» և այն։ Երեկի թէ ինձ ել իրաւունք տուեց որ իմ ձայնաւութեան հերթում խօսեմ, կալծիքներ յայտնեմ, ապահով՝ որ այն ժամանակ արդէն քառանուն ցանկը զրեթէ կազմուած կը լինի։

Պարզ և որոշ օրէնքների անըմբոնողութիւնից յետոյ, լոգիկայից էլ զուրկ լինել այսպիսի մոլորութիւնները անխուսափելի պիտի դառնան ի հարկէ։

Եթէ Թալանթարները յիրաւի այն ժամանակ գիտակցում էին որ՝ ժողովականները իրաւունք ունին գոնէ ձայնաւութիւնը չսկսուած՝ խօսել կարծիքներ յայտնել Կաթ. թեկնածուների մասսին, ինչնու ուրեմն և՛ Սուքիաս արքեպիսկոպոսի միջադէպում նոյնպէս լուութեամբ համակերպուել էին Պրօկուրօրի մտացածին «օրինական արգելքին», փոխանակ զգաստացնելու նորան թէ հակառակ է գնում՝ օրէնքներին (յօդ. 16 և 17) և չափ դնելու կամայականութեանը։ Զէ՞ որ յանձին Սուքիաս արքեպիսկոպոսի՝

պատգամաւորն էր զրկւում կարծիք յայտնելու իրաւունքից։ Ներզողութիւն թող անեն. Նոյեմբերի 1-ի իմ Յայտարարութիւնից յետոյ՝ միայն հազիւ թէ լրջացան, բայց արդէն ուշ։ Նոյեմբերի 2-ին էլ թէկ տեսայ ինտելլիգէնսա պատգամաւոր, որ նոյն անըմբոնող տխմարն էր մնացել։

Դորա գրում են. «Ժողովը ճանաչեց բողոքը (?! անհիմն)։

— Ընդհակառակը, ժողովը գտնելով իմ նկատողութիւնները աւելի քան հիմնաւոր և օրինաց պահանջ վճռել է իմ Յայտարարիւնը «կցել ընդ զարծոլն»։ Ի հարկէ գորանից էլ աւելի ոչինչ չէր մնաւմ ժողովին անելու։ Սակայն որ փոխանակ իմ Յայտարարութիւնը քուէ հաշուելու համաձայն ընտրութեան Կանոնըի 21-րդ յօդուածի ծանօթութեան, համարել հն կարծիք՝ ըստ 2-րդ յօդուածի և 25-րդ յօդուածի ծանօթութեան՝ այդ էլ ժողովականների և ժողովի զեկավարների գարձեալ կանոնների անըմբոնողութեան պիտի վերագրել*):

Ասացի՝ որ «կանոնների սխալ ըմբռնողութեամբն է. սովորիւն գարձել» (18 եր.)։

Որովհետեւ ձեռնադրութեան սրբազործութեամբ եկեղեցականց աստիճանաւորումները պահանջում են որ թէ եկեղեցում և՛թէ արտաքոյ՝ հոգկորականք տեղ բռնեն ըստ աստիճանի և աւագութնան ձեռնադրութեան, այդ պատճառաւ էլ Սսի, Աղթամարի Կաթուղիկոսներին և Երուսալէմի ու Կ. Պօլսոյ Պատրիարքներին վայել է՝ որ ուղարկեն իրենց դիրքի և կոչման համապատասխան աստիճան և աւագութիւն ունեցող ներկայացուցիչներ։ Բայց ի հարկէ յաճախ կը պատահի որ չեն կարող ուղարկել այդ-

*) Այս գլուխը, իբրև հերքումն, սակայն համառօտ, ուղարկեցի «Մշակին» և ուրիշ լրագիրների, բայց չըրատարակեցին։ «Գործը» պօստարկում պատասխաննեց. «Չեր հերթումը բարեհաճէք ուղղել հէնց «Մշակին», որ աղաւաղել է ձեր խօսքերը և սուտ տեղեկութիւններ հաղորդել» (№ 53):

պիտիները, բայց և չեն կտրող պահանջել՝ որ իրենց յանձնարարած կամ ուղարկած երէկուայ վարդապետ կամ հպիսկոպոս պատգամաւորները բարձր նստեն ժողովին անդամակցող հինաւուրց արքեպիսկոպոսներից, — առա այս պատճառով է որ, կարծում եմ, կանոնում ասուած է թէ զորա պիտի գնան Տեղապահից յետոյ, ուրեմն մեջեղով, մինչ միւս հոգեւորականները՝ Տեղապահի եւկու կողմերից: Բայց Տաճարում՝ պիտի նստեն, ինչպէս ժամանելու մասն կամ նստաւմ են, և պիտի ձայն տան, չիք տարակոյս, «ըստ աւագութեան աստիճանի ծեռնադրութեան իւրեանց»:

Ես այսպէս եմ հասկանում ընտրութեան կանոնքի չհառկացուած չարաբաստիկ 12 և 14-րդ յօդուածները: Այսպէս է թերագորում եկեղեցական կարգերի գիտակցւութիւնը և նախանձախողութիւնը, այլ և լոգիկան: Եւ վերջապէս չէ որ այսպէս են նստում կամ ձայն տաքիս «Երեւանի Թեմակալի (Կաթողիկոսի) Փոխանորդ» կոչուող վարդապետ կամ հպիսկոպոս պատգամաւորները... .

V

«Լոեցի իզմիրլիանի մասին գործնական խիստ մեծ կարևորութիւն ունեցող ասելիքս» (եր. 14, 16): Կարեւորութիւնից գարձեալ զուրկ չի լինի՝ որ այժմ ասեմ, բայց ի հարկէ տարրեր խմբադրութեամբ: Իզմիրլիանին չեմ ճանաչում, և չպիտի գովեմ: Ասում են որ օմաքուր մարդ է». Հաւատացէլ եմ ասողներին և իմ ձայնը տուել ընտրել մահուրը: Այլ իմ ասելիքը պիտի լինի: Հերքել, եթէ յաջողիմ, երկու մեղադրանք:

ա) Շատ խօսուեց ու գրուեց իզմիրլիանի մասին, թէ՝ նա յեղափոխական է, թէ՝ հայկական աղէտները հետեանք էին Պատրիարքի (նորա) լըբոստ խօսքի և գնացքի, թէ՝ Սուլթան Համբեկը նորան ձգեց պատրիարքութիւնից և աքսորեց Երուսաղէմ իբրև հայկական խառնակութիւնների պարագլոււմ: Խրիմնանի հէնց մահից յետոյ այսպէս էին ոռւս թերթերում, ի հայոց գրութեան մասին:

ներ, հանդէս բերում ծանօթացնում Հայերի ցանկալի կաթուղիկոսացու իզմիրլիանին, ոչ պակաս և հայ թերթերում:

Ուստահայոց լաւ ծանօթ, հին գործիչ գրագէտ, Մարկոս Աղարէզեանը 1907 թ. նոյեմբ. 20-ին գրում է ինձ նամակ, իւղնդրում է ուղարկել իրեն մի օրինակ «Ճշմարտութիւնը չի մեռնաւմ» իմ գրքից: Պատմում է որ Օրմանեան Պատրիարքը Խրիմնանի մահուան լուրը ուսանալով, «մի արտաքոյ կարգի հանդիսաւորութեամբ հոգեհանգիստ» է կատարել: Խօսում է կաթողիկոպէթիւնից գարձած հոգեւորականների և առանձնապէս Օրմանեանի մասին՝ շատ աննպաստ կերպով: Շարունակում է. «Այսօր մեր մէջ միայն մի հպիսկոպոս կայ որ թէ ազգը և թէ եկեղեցին լաւ է ճանաչում և ըստ այնց, այսինքն ազգային զգացումով ու եկեղեցու հոգւով վարք ու բարք ու բնոյթ ունի: Այդ եպիսկոպոսն է նախկին Պատրիարք Կ. Գոլսոյ Տէր Մատթէսոս իզմիրցեան, որ հարազատ հայ քրիստոնեայ լինելուն, մեր Սուլտանն աքսորած է երուսաղէմ, ասս տարուց հետէ: Երանի կը լինէր Հայոց ազգը՝ թէ որ նա կաթողիկոս ընտրուեր: Եկեղեցու սահմանադրութեան ակղեակ, միահեծան իշխանութեան հոգի չունի, շահասիրութիւնը բնաւ: իր պատճի իզմիրցի է եղել, հետեարար Արաբատեան երկրէն զաղթած: Համայն քուէով Պատրիարք ընտրուեց և իր պատրիարքութիւնը լաւ վարեց ու միայն Սասունցոց Կոտորածին սուտ վկայութիւն չանելուն համար Սուլտանի պահանջումով, գիսպաններուն համար՝ թէ Սուլթանի զինորները չկային այդ կոտորածին մէջ, Սուլտանը գահազուրկ արեց նորան ու Պոլսից գուրս արեց: Այս, Ասրբազն Տէր, իզմիրցեան Մատթէսոս եպիսկոպոսը համարձակուեց մերժել Սուլտանին հազարէն աւելի ոսկիները ու սուտ վկայութիւն չարեց իր ազգին դէմ: Ինչպէս որ Նէրսէս Պատրիարքն վարժապետեան հազար հինգ հարիւր ոսկի և մի մեծ տուն ընդունեց Միջազիւլում, Հայոց ինդիրը խափանելու համար ըստ կամաց Սուլտանին, թէ և խնդիրը չը խափանուեց: Բացի այդ...»:

Ես ուղարկեցի թէ նորա խնդրած գիրքը և թէ այդ ժամա-

նակ նոր լոյս տեսած «Խորենացին Ե. դարի առաջին հառորդից մատենագիր» գրքոյի կը: Մի և նոյն ժամանակ (6 Մարտի 1908 թ.) գրեցի նորան նամակ, 'ի միջի այլոց՝ ասացի: «Ձեր ընտրելին ընդհանրութեան ընտրելին է, սակայն ափսան որ նորա մասին չար մարդիկ հայ և ուս թերթերում ամբաստանում են իրեւ յեղափոխական և կասկածելի դարձնում յաչս երկուց տէրութեանց»:

Մարտի 30-ի նամակով զովելով և չնորհակալ լինելով գշր-ըերի համար, գրում է. «Իզմիրլեան Մատթէոս հպիկոպոսն ամենին յեղափոխական չէ, հապա մեր ազգին ազգային ու եկեղեցական իրաւանց և արտօնութեանց պաշտպան, որոնք ամենքն էլ Սուլտան Համիտ գահն բաղմեց թէ չէ խլեց, վերցուց, ջնջեց և հրամայեց բռնավարի, որ ոչ գանգատին, ոչ ինքրեն վերահաստատութիւն, պատճառ որ ինչու համար Հայք պատգամաւոր դըրկեցին Անգլիա և Պերլինու վեհաժողով»:

Դորանից յետոյ Մայիսի 1-ին նա գրում ուղարկում է ինձ մի ընդարձակ (10 երես) յօդուած՝ մեր «Արարատի» Յունվարի տետրակում (եր. 46—52) տպուած «Տաճկահայք» վերնագրով յօդուածին ի պատասխան: Այդ յօդուածում և՛ պատմում է որ նոյն սուս վկայութիւնը նախ պահանջել էին Աշըղեանից մի պաշտօնիայի (Մամիկոնիան) միջոցաւ և մերժուել. երկըորդ անգամ «աւելի մեծ պաշտօնատարի միջոցաւ (Խաղէղեան Յակոբ Փաշայի համար կըսուէր) պահանջեր է այդ սուս վկայութիւն գրով տալ ի գին գրամական պարզեցի. խեղճ Պատրիարք կամքերին ակամայ կատարեր է: Բայց ինքն ալ կոտորած և այրած հայերու որդոց և թոռանց վրէժինդրութեան ենթակայ եղաւ, կրակ էրին վրան սպանելու նպատակով: Ետքէն Աշըղեան եպիսկոպոսի յաջորդեց իզմիրլեան եպիսկոպոսը: Ատորմէ ալ սուտ վկայութիւն պահանջեցին թուրք պաշտօնատարով, Միւնիր պէյի, որ այսօր Միւնիր փաշա է և գեսպան Փարիզու, մեծ պարգև միւնիավար խոստանալով: Երբ ան մերժեց, սաստիկ կատղեցաւ Սուլտան Համիտը...»: Ուրեմն:

Ուրեմն իզմիրլեանի գահնկէցութեան և երուսաղէմ աքսոր-

ման պատճառ յանցանքն այն է եղել՝ որ Աշըղեանի նման դաւաճան չի դարձել իւր տառապեալ ազգի գէմ, այն, որ միայն դաւաճան չի դարձել Յաւելացնենք՝ որ և՛ բողոքել է կոտորածների գէմ: Իսկ կոտորածները սկսուել է իզմիրլեանի պատրիարքութիւնից հօ առաջ, Սուլթան Համիդի հանելի Պատրիարքի օրով:

Սուլթան Համիդը ինչպէս չկատաղէր, որ Վարժապետեանը՝ ընդունել էր նորա կաշառքը, Աշըղեանը՝ յանձն էր առել իւր ազգին դաւաճանել, Խրիմեանը՝ զեռ աւելի առաջ, 1883 թուին դաւաճանել էր, ի հարկէ ոչ ձրի, հէնց իւր հայրենի Վասպուրական նահանգի ամբողջ հայ ազգաբնակութեան գէմ և իվլաս Հայկական Դամի. տես «Մասիս» № 3525*): Իսկ իզմիրլեան՝ համարձակում է մերժել միւնիավարը և արիւնկզակ Սուլթանի հրամանը՝ դաւաճանել իւր ազգին: Հարկ չկայ ասելու, որ հակառակ գէպքում՝ Հայերը իհարկէ: Իզմիրլեանին վերին երուսաղէմը կյուղարկէին, եթէ ոչ ներքին գժոխըլ:

Ճշմարտութիւնը ահա այստեղ պիտի լինի, կարծում եմ, և ոչ թէ Շիրվանզագէի և միւնիրի՝ յետին թւով և ազատութեան օրերում իզմիրլեանին պանծացնելու համար «ինկարկու» գրուածքներում. որոց վերայ հիմնուել է Ս. Զէրքէզեանը՝ «Հովիւ» № 40 շաբաթաթերթիում մի այնքան ծանր գատապարտութիւն կար-

*) Բայց որ Գր. Արծրունին խաբեց «Մշակի» ընթերցողներիս, թէ՝ «Խրիմեանը օտար լիզու չիմանալով՝ վանայ կուսակալը հեռազրի բովանդակութեան մասին խաբել է նորան և ստորագրել տուել»: Այն խաբեց Արծրունին, որովհետև «Մշակի» խմբագրութիւնը ստանում էր «Մասիս», որտեղ Խրիմեանը իւր բացարութեան մէջ Պատրիարք Վարժապետեանին՝ խոստավանում է իւր գաւաճանութիւնը: «Մասիս»-ները աչքից անցրել եմ միայն 1903 թուին: Այդ թուին ինձ Ֆիլիխում տուել են կարդալու և՝ «Խրիմեան եւ գործ իւր հատոր առաջին. Կոստանդնուպոլիս, 1874» գրքոյկը... Խրիմեանի վերաբերմամբ Ռուսահայերիս խաբողն ու մոլորեցնողը՝ «Մշակի» արբանեակներն էին:

գալու համար։ Զէրքէզեանի կազմած մեղադրական ակտի գլխաւոր սիւներն են՝ համեմատութեան բերուած վարժապետեանի մեղրածորան շնորհաշուը խօսքերը՝ մի կողմից, իսկ միւս կողմից՝ իդմիրլեանի սառն ու պահանջկու խօսքերը, Սուլթանի և նորակառավարութեան հանգէպ։ Սակայն գլխաւոր ծանրութեան տանող այդ սիւների հիմքերը խախուա են զրուած, որովհետեւ Զէրքէզեանը աշքաթող է արել երկու Պատրիարքների ժամանակներն ու անցած դարձածներն էլ համեմատութեան գնել... Պարս Զէրքէզեանը այս խրապին է ուզում որ մարդիկ հետեւին, թէ՝ «Այն ձեռքը (կտրելու արժան), զոր չես կարող կտրել, պաշիր ու դիր ճակատից։ Բայց այդ արգէն շատ հին ծայրահեղ սարկաժառութիւնն էր, վաղուց է որ մարդիկ գատում են — «Այն ձեռքը, զոր չես կարող կտրել, զոնէ մի՛ ել լիզի»։ Արիւնուայ, սպաւոր և շարունակ հալածուող ու դասնացած Հայերի որեէ խմբման ժամանակ որինակ՝ թագում, մկրտութիւն, հարսանիք, տօնակատարութիւն, գլուցական հանգէս, ազօթում էին արեան ծարաւ Սուլթանի արեշառութեան համար, որ պատճառաւ էլ չափազանց վիրաւորուած են եղել Պօլոյ Հայերը։ Մարդկանց զգացմանքների հետ խազալ, արհամարհել այդ աստիճան անփոյթութեամբ, և այդպէս անսղներին անուանելու «Փիելը մարդ»...»։

բ) Իզմիրլեանի համար Մկրտիչ Խրիմեան կաթուղիկոսը 1894 թ. ամառն Բիւրականուում ինձ ասել էր. «Իզմիրլեանն ալ պնդէ կը յամառի»։ Իսկ ես Նորան պատասխանել էիր՝ «Եթէ գիտեցած համոզուած բանի վերայ կը պնդէ՝ այդ հաստատամտութիւն է՝ առաւելութիւն մարդու և առաքինութիւն, բայց եթէ չ'համոզուած կամ իւր սիալը իմանալուց յետոյ ես կը պնդէ՝ այդ դէպքում միայն յամառութիւն է և արատ մարդուն»*):

*.) Ես տեսել ճանաշում էի վերջին տեսակի երկու մարդ, Քէորգ Դ. Կաթուղիկոսի ժամանակ Էջմիածին եկած և մեզ միաբանակցած, Երուսալէմի միաբաններ Բառնաբաս և Կիւրեղ վարդապետները։ Լաւ մարդիկ, սակայն հէնց այդպիսի յամառներ, մասնաւանդ վերջինը։

Նոյն տարին Դեկտ. վերջին օրերում Կաթուղիկոսը միկնեց էջմիածնից՝ Պետերբուրգ գնալու մտադրուած։ Նորա հետ էի և ես, Իզմիրլեանը նոր ընտրուել և հաստատուեց Պատրիարք Կ. Պօլսոյ։ Վախճանեց Սակայն Մկրտիչ Կաթուղիկոսը։ Տակաւին Տփխիսումն էինք, այդ ժամանակ ես ասացի, որնք ողջ են՝ կը վկային. — Իզմիրլեանի համար սկզբունքային ամենագժուար հարց առաջ եկաւ. Նա, որ Գէորգ Դ. Կաթուղիկոսի ժամանակ և հետեւողութեամբ Սակ կաթուղիկոսութիւնը ազգին վնասակար, ոհետեալ և հակաթոռ համարելով՝ այնքան ազմկում էր, այժմ իբրև Պատրիարք ինչ գիրք պիտի բռնէ։ Սպասենք և տեսնինք»։

Իզմիրլեանը, տռանց յամառուելու կամ տատանուելու իսկ, յայտնի է, ոչ մի րոպէ չվարանեց խոստավանել և ճանաչել Սակ կաթուղիկոսութեան մեծ կարևորութիւնը, և նոր Կաթուղիկոսի ընտրութիւնը հերթական գործ գարձեց՝ առանձին իման հոգացողութեամբ։ Անշուշտ փոխուած պիտի լինէր նորա առաջուայ աշխարհահայեացը»։

Ուրիմ, Իզմիրլեանը կամակոր «յամառ» չէ՝ ինչպէս փալառ կամքի և յեղյեղուկ խելքի տէր Խրիմեաններն էին համբաւում, կամ ինչպէս Մ. ա. ք. Մէլեանցը նորան «գովելով, սակայն զբայցն ի վերայ յաւելլով՝ զգուշացնում էր Տփխիսում ինչ որ «Կաթուղիկոսական Յանձնաժողովի» Մայիսի 27-ի նիստում, և ապա գրում. «Ս. Իզմիրլեան օրենքի ու կանոնի մարդն է, անտանելիի չափ անելի եւ անվեհայ պահող... Հայրաբար Ենուանութեալ մի գուցէ իր երկարեայ կամքը զործ դեկ մեր եկեղեցու մեր ծրագրած ու ըղձացած աւխարհականացման դեմ։ Հիւանդ եր, եւ գանգաւում եր իւր հիւանդութիւնից» (Մշակ Հ 119):

Մ. ա. ք. Մէլեանցը, —որ, օգտուելով «Խրիմեանի «•ըէնքի ու կանօնի մարդը» Նինելուց՝ գլուխ էր բերել Գէորգ և Մակար կաթուղիկոսների մերժութ Թայրիեանցի 30 հազարանոց ամուսնալութեանը՝ միայն, կարծեմ, 15 հազարով, —իրաւունք ունի Իզմիրլեանից զգուշանալու և զգուշացնելու։ Իրաւունք ունի, մարդիկ միշտ էլ փնտրել են հաճոյացողը — «եղէդն շարժուն ի հողմոյ»,

իսկ օրէնքը յիշեցնողի՝ գլուխն են կտրել (տես Ա. Մատ. ԺԱ.): Ի հարկէ ոչ ոք չի կարող պատճառ համարել «սուտ փոլիտիքի մարդ» Խրիմեանին*), որ այսօրուայ հայ գրողն ու խմբագիրը, իրաւաբանն ու բժիշկը, աստուածաբանն ու մազիսարոսը, ուսուցիչը, տեսուչը և ինսելիգէնս հոգաբարձուն (օր. Ներս. Վալ.**) նորագոյն ժամանակի քահանան ու վարդապետը, և որոնք առհասարակ պիտի հայ ազգի ազգը լինէին, չունելով երկիւղն Աստուծոյ, և զուրկ բարոյական համոզմունքներից՝կազմում են խարի համար միայն մտածող ու միմեանց փոր թափող մի խօսուն երամակ: Մի նայեք դորանց կեղծ ու պատիր ծախու խօսքերին, հետները գործ ունեցէք՝ և իսկոյն կը համոզուէք: Բացառութիւններ կը լինեն ի հարկէ: Բայց որ հայ հաստատութեանց գլուխ կանգնող, «օրէնքի ու կանոնի մարդ» Հայրապետի անձնական մաքուր օրինակն ու շունչը կախտահանէ գննէ որոշ շրջաններ—ես դորան հաւատում եմ:

VI

Պատգամաւորաց Ժողովին մատուցած Նոյեմբ. 1-ին, յայտարարութեանս մէջ յիշուած Յայտարարութիւններիս և յօդուածների պատճէնները լերում եմ այստեղ, ոչ լոկ իբրև ապացոյցներ առհասարակ մերօնց «տկար ըմբռնողութեան օրէնքների», այլ՝ անկորուտ պահպանութեան համար, որպէս ջատագովական կարևոր փաստաթղթեր կաթուղիկոսական վտանգուած իրաւունքների:

*) «Խմասուրի և մարդկային» գրքոյկ, Վենետիկում տպուած: Կարգացէք դորա վերջին գլուխը, տեսէք լուսատիպից էլ աւելի ճիշտ պատկերը Խրիմեանների:

**) Տես Հոգաբարձութեան իմ տուած խնդրագիրը տարւոյս Յուլիս 17-ի և Հոկտ. 7-ի:

Ի կուսաւորչական Հայոց Սինօգն Ս. Էջմիածնի՝

Յայտարարութիւն.

Հանգուցեալ Մկրտիչ Խրիմեան Կաթուղիկոսը, իւր և մանաւանդ անկուշտ մերձաւորների թուլութեամբ յաճախելով ամուսնութիւնների լուծանելը՝ առիթներ տուեց ծանր բողոքների, որոց հետնեց Քարձարագոյն կարգագրութիւն, որով ամուսնալուծութեան գործերի վճռահատութիւնը անցաւ Ս. Էջմիածնի Սինօգիս: Կաթուղիկոսը բողոքելով այդ հոգեսոր խնդիրների իւր՝ օրէնքով սահմանեալ՝ իրաւունքի խախտելու մասին, քանից անգամ զիմեց Ներքին Դործոց Նախարարին, այլ և Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր: Վերջ ի վերջոյ, գործը յանձնուեց Սենատին, Որը բացարձից, ի միջի այլոց, թէ՝ «ամուսնալուծական գործերը, աւելի արգարեթեամբ վախճան սահնալու հսմար՝ թողնել Էջմիածնի Հայոց Սինօգին, որպէս կոլլեգիալ հաստատութեան. Որի նախագահը հնըը Կաթուղիկոսը լինելով՝ Նորա համաձայնութեամբ էլ կը վճռուին այդպիսի գործերը»:

Արդ, ինչպէս «Արարատի» (Յունվար, Փետրվար և Մարտ) պաշտօնական բաժիններում կարդում և տեսնում ենք, Կաթուղիկոսի վախճանելուց յետոյ ևս ո. Սինօգը շարունակում է ցայսօր ամուսնութիւններ լուծանել. որով, ինչպէս կարծում եմ՝ անտես են առնուում ոչ միայն օրէնքը (տես Պօլօմէնիա յօդ. Ժ. Ի. Լ. Է. Խ. ԽԱ. ԽԲ.), այլ և նոյն իսկ Սենատի յիշեալ բացարձութիւնը:

Ես կարծում եմ, որ պէտք էր զագարեցնել Սինօգում այդօրինակ, ըստ իս՝ ոչ օրինական վճռահատութիւնները, մինչև Կաթուղիկոսի հաստատութիւնը (տես յօդ. ԽԲ.):

Ճշմարիտ է, վերջին կարգագրութեամբ և Սենատի բացարձութեամբ՝ կարճուած է Կաթուղիկոսի եզակի վճռահատական իրաւունքը ամուսնալուծական գործերում, սակայն վերապահուած է Նորան, և միայն Նորան, այդօրինակ վճիռներին գննէ նախահանելը:

Ես այսպէս հասկանալով օրէնքը և Աենատի բացատրութիւնը, ամսոյն 6-ին ուղարկեցի վերոպրեալը լրագրութեան, օրինակ՝ «Մշակին», «Վասակին», որոյն զի նախ մամուլի մէջ պարզուէր ինդիւս. սակայն լոյս չտեսաւ ցայսօր, գուցէ և չի էլ տեսնի, քանի որ նոքա անպատասխանաւու են և միանգամայն թունդ կողմանակիցներ ապահարզանի: Թէպէտ հարցը այստեղ միայն օրէնքի նշանակութեան մասին է:

Վասնորոյ այժմ ընծայելով նոյնը ի բարեհայեցողաւթիւն Սինօդի և պատճէնը՝ պ. Պրօկուրօրին Սինօդի, կը յաւամ փոքրիկ ծառայութիւն մատուցած լինել այսու: 14-ն Ապրիլի 1908 թ. ի ս. Էջմիածին*):

Միարան ս. Էջմիածնի

Բարդ. եպիսկոպոս Գէորգեան

ՆԱՌԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 17 Մայիսի

Բարդ. եպ. Գէորգեանը, «Մշակի» № 87-ում խօսելով այն մասին, թէ Կաթուղիկոսի վախճանվելուց յետոյ ևս մեր Սինօդը (Էջմիածնի) շարունակումէ, ցայսօր ամուսնութիւններ լուծել, կարծում է՝ անտես է առնվում ոչ միայն օրէնքը (պօլօժենիայի յօդ-

*) «Մշակը» յետոյ Ապրիլի 24-ի համարում (87) հրատարակեց. Որին մի ամիս յետոյ պատասխանեց Սինօդի անդամ Յուսիկ վարդապետը, և որը նոյնպէս յառաջ պիտի բերեմ ճշգութեամբ, իբրև ընդհանուր անըմբոնողութեան լիակատար ասականացոյցը: Իսկ Սինօդի Պրօկուրօր պ. Փ. Մէլիք-Օհանջանիանցը Յունիսի 6-ին հանդիպեց ինձ թէպէտ այլ գործով, բայց և խօսք բացուցեց այս գործի մասին. նա ասաց. «Սինօդը Պրօֆէնիով իրաւունք ունի առանց Կաթուղիկոսի նախագահութեան էլ ամուսնութիւններ լուծանել»: Հապա Սինօդից այդպէս պատասխանէք ինձ. ասացի...

ուածները), այլ և նոյն իսկ Սինօդի (կառավարիչ սենատի) հետեւալ բացատրութիւնը՝ «ամուսնալուծական գործերը, աւելի արդարութեամբ վախճան ստանալու համար՝ թողնել էջմիածնի Սինօդին, որպէս կօլեգիալ հաստատութեան, որի նախագահը, ինըը կաթուղիկոսը լինելով, նրա համաձայնութեամբ (ընդգծումը մերն է) էլ կը վճավեն այդպիսի գործերը»:

Բարդ. եպ. Էջմիածնի Սինատի այս բացատրութեան վրայ, իրաւունք ունի կարծելու, որ «պէտք է զադարեցնել Սինօդում այգօրինակ, ոչ—օրինական վճռահատութիւնները, մինչև կաթուղիկոսի հաստատութիւնը», որովհետև «վերապահնեած է նրան և միայն նրան այգպիսի վճիռներին գննէ նախագահելլ»:

Մեզ յայտնի չէ, թէ Բարդ. եպ. որտեղից է վերցրել սենատի վերոյիշեալ բացատրութիւնը, որը միանգամայն չէ համապատասխանում այն բացատրութեան, որ մենք ձեսքի տակ ունենք և որը իսկականն է՝ ուսւերէն գրված: Եւ սենատի այս բացատրութիւնից զատ՝ ուրիշ բացատրութիւն էլ չը կայ ամուսնալուծական խընդիրների առիթով:

Որպէս զի ընթերցողի համար միանգամայն պարզ լինի Բարդ. եպ. Կարծիրի սխալ լինելը, մենք նոյնութեամբ առաջ կը բերնեք Կառավարիչ սենատի բացատրութիւնից այն կտորները, որոնք պարզում են կաթուղիկոսի իրաւունքի սահմանը ամուսնալուծական խնդիրներում:

Սենատը 1899 թուի մարտի 26-ին գրում է Էջմիածնի հայոց սինօդին. «...На основании изложенныхъ соображенийъ Правительствующій Сенатъ находитъ, что дѣла брачныя и бракоразводныя, производящіяся на основаніи ст. 1142 Уст. ин. испов. въ Эчмидзинскомъ Синодѣ, должны быть отнесены къ дѣламъ суднымъ и, какъ таковыя, подлежать разсмотрѣнію и рѣшенію названнымъ Синодомъ не иначе, какъ на правахъ коллегіи, согласно ст. 1146 тѣхъ же Уставовъ; разрешеніе же сихъ дѣлъ окончательно по единоличнымъ резолюціямъ Верховнаго Патріарха—Католикоса представлялось бы несоответственнымъ закону...» Правительствующій Сенатъ опредѣляеть: разъ-

яснить Эчміадзинскому Армяно-Григоріанскому Синоду указомъ что дѣла брачныя и бракоразводныя должны быть разсматриваемы и рѣшаемы симъ Синодомъ на правахъ коллегіи, въ ко торой Верховный Патріархъ Эчміадзинскій участвуетъ въ качествѣ предсѣдателя, при чёмъ голосъ его имѣеть перевѣсъ только въ случаѣ равенства голосовъ. О чёмъ для руководства Эчміадзинскому Армяно-Григоріанскому Синоду послать указъ».

ԱԵՆԱԹԻ ԱՅՍ ԲԱՋԱՄՊՐՈՒԹԵԱՆ մէջ ԿԱՅԹՈՂԻԿՈՎԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ» մասին հեռաւոր ակնարկ անգամ չը կայ: Նա, կաթողիկոսը, ինչպէս միւս գործերի, բայց զուտ կրօնական, այնպէս էլ ամուսնալուծական խնդիրների գեկուցման ժամանակ մասնակցելու է սինօդի նիստերին, իրբ նախագահ, և ձայների հուասարութեան գէպքում նրա ձայնը ունենում է գերակշիռ կամ վճռող նշանակութիւն:

Բարդ. եպ. պնդում է, որ գննէ ամուսնալուծական խնդիրների մասին որոշումն տալիս պիտի կաթողիկոսը նախագահէ. «...վերապահուած էնրան, և միայն նրան, այդպիսի վճռոներին գննէ նախագահէլը...»:

Թէ որտեղից է հետեւնում Բարդ. եպ. իր այս եղբակացութիւնը, գտուարանում ենք իմանալ. Մենք միայն գիտենք, որ կաթողիկոսի կենդանութեան ժամանակ, երբ նա յաճախ բացակայում էր Մայր Աթոռից, սինօդը վճռում էր նաև ամուսնալուծական խնդիրներ, անշուշտ կառավարիչ սենատի որոշման համաձայն, որ տուել է էջմիածնի սինօդի ի գործադրութիւն: Շատ բնական է, որ կաթողիկոսը բողոքէր սենատի՝ իր ամուսնալուծական բացարձակ և եզակի իրաւունքները կրճատող որոշման դէմ: Եւ կաթողիկոսը բողոքեց Թագաւոր Կայսրէն, որի մասին նա յայտնում է սինօդին 1899 թ. Հոկտ. 18-ին, № 1188 կօնդակվ:

Կառավարիչ սենատը, երկրորդ անգամ լսելով յարուցված խնդիրը, որոշում է. «Всеподданнейшую жалобу Верховного Патріарха—Католикоса Мкртича оставить безъ последствій, о чёмъ для сообщенія Верховному Патріарху Мкртичу, Министру Вну-

тренныхъ Дѣлъ и для руководства Эчміадзинскому Синоду посыпать указы. Юня 20 дня 1903 года»: Կառավարիչ սենատի այս երկրորդ ուկագին հատկում է երրորդ ուկագը էջմիածնի սինօդի անունով, 1904 թ. Մայիսի 7-ին: «Такъ какъ исполнительного рапорта на означенный указъ въ Правительствующій Сенатъ до настоящаго времени еще не поступало, приказали: notwithstanding Էջմիածնի Արմանո-Գրիգորիանսկому Синоду о немедленномъ исполненіи указа Правительствующаго Сената отъ 20 го Юния 1903 года».

Այս բոլորից յետոյ՝ էջմիածնի Սինօդը 1904 թ. Մայիսի 19-ին՝ լսելով կառավարիչ սենատի ուկագները՝ օրագրութիւն է կազմում, որի մէջ ասված է. «Հրամայեցին: Որովհետեւ հրաման սենատի ի 20 Յունիսի 1903 ամի թ. 1319 բոլորովին համամիտ է հրամանի ի 26 Մարտի 1899 ամի թ. 338, որ արդէն ընկալեալ է ի հրահանգուին եւ ի կատարումն օրագրաւ յ31 Մայիսի 1899 ամի, ուստի գեկուցանել կառավարիչ սենատի, թէ հրամանը (указы) նորին ընկալեալ են. ի հրահանգութիւն»:

Էջմիածնի Սինօդը այս որոշումը յայնուում է կառավարիչ սենատին 1904 թ. Մայիսի 26-ին № 462 յայտարարութեամբ, գրելով, «что указы Сената о порядке производства брачныхъ и бракоразводныхъ дѣлъ, Синодомъ приняты къ руководству»:

ՄԵՒՔ ԱՅՍ ԲՈԼՈՐԸ ԳԻՄԵՆԱԼՈՒ ՅԵՏՈՅ, ԴԱՐՁԻԱԼ ԿՐ ՄԻԱՆ ԿԱՐՃԱՂՆԵՐ, ԹԷ պէտք էր գաղաքանենել սինօդում ոչ—օրինական վճռահատութիւնները (ամուսնալուծական խնդիրների վերաբերմամբ), մինչև կաթողիկոսի հաստատութիւնը. ինչպէս Բարդ. եպ. Գէորգիանը («Մշակ» 112)*:

ՅՈՒԱՐԻԿ ՎԱՐԴԱՎԱՅՐ

*.) Այս, հայր Յուսիսկներ, ամբողջ հայութեան մէջ միայն Բարդ. եպ. է այդպէս համաստում Մենատի բացարարութիւնը: Դարձիալ միայն նաև էր այնպէս, տարօքինակ կրպավ հասկացել Պօլոֆէնի այի ձմեռ-ը յօդուածը: Միայն նաև էր՝ որ փրկեց Հայոց կաթու-

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 27 Մայիսի:

Էջմիածնի Սինօդում, առանց Ամենայն Հայոց Կաթուղիկոսի, ամուսնալուծութեան գործերի վախճանական վճռահատութիւնների մասին իմ կարծիքը, գրուած անցեալ Ապրիլի 6-ին, լոյս տեսաւ հազիւ 24-ին («Մշակ» № 87), այն էլ վրիպակներով և աղաւազած։ Տեսնելով որ «Վատակը» և «Մշակը» յետաձգում են տպագրութիւնը կամ գուցէ չտպագրեն, իսկ մեր Սինօդը պիտի շարունակէ լուծանել ամուսնութիւններ, նոյն Ապրիլի 14—15-ին միւնոյն կարծիքս անդական պօստով ուղարկեցի Սինօդին և պատճէն՝ պ. Պրօկուրօրին Սինօդի։ Թէ գորանից յետոյ Սինօդը և Պրօկուրօրը ինչ որոշումն կայացրին՝ ես չգիտեմ, սակայն վերջին հասած «Մշակի» 112-րդ համարում լոյս տեսաւ Սինօդի անդամ Յուսիկ վարդապետի նամակը, որից նոր լուսմ և իմանում եմ, որ Կաթուղիկոսի կենդանութեան ժամանակն էլ իրենք — սինօդականները, առանց նորա զիառութեան և մասնակցութեան՝ լուծել են ամուսնութիւններ։ Յուս. վար. բերելով և ուստեղին քաղուածներ Սինօդի բացատրութիւններից և գրութիւններից, իւր զարմանքն է յայտնում, թէ ես որտեղից կարող եմ հանել այնպիսի եղբակացութիւն՝ որ «վերապահուած մնի Կաթուղիկոսին, և մրայն նորան, այդպիսի գործերի վճռահատութեան գննէ նախագահնը», քանի որ այդ մասին, նորա ասելով՝ «ամենահեռաուր ակնարկ անգամ շը կայ սենատի բացարութեան մէջ»։

Առ այժմ իմ ասելիքը ընթերցողին։ Առաջին, չեմ զարժանում, սակայն ցաւալի է՝ որ Կաթուղիկոսի օրոքն էլ Սինօդը առանց նորան լուծել է ամուսնութիւններ։ Գիտենք որ Հանգուցայլը և բանահառում եւր իրաւոնքները և երբեմն էլ ի չարը գործ գնում։ Երկրորդը, իմ կարծիքը արգէն։ Սինօդ մտնելուց յեղիկութիւն հոգեարք վարչական գործերում չէզաքացուելուց։ տես «Ճեմարտութիւնը չի մեռնում» եր. 8 և 163։ Էլլ կուգէք...»

առյ հարկաւոր է սպասել Սինօդին, թւ արժան է Սինօդին դիմել իրաւաբանների խորհրդի, իսկ առ այժմ դադարեցնել այդպիսի՝ ըստ իս ոչ —օքնական վճռահատութիւնները։ Յոյս ունիմ որ Սինօդի միաւլը կ'ուղղուի երրորդ, որովհետեւ Յուս. վարդ. ձեռքի տակ ունենալով հանդերձ վաղուց Սինօդ մտած իմ Յայտարարութիւնը՝ հիմուել է «Մշակումն աղաւագուած նամակին վրայ, ուր, փոխանակ պարզ գրուած Սենատ բառի, երեք անգամ և առանց բացառութեան՝ տպագրել են «Սինօդ», — զոր բարեհաճում է Յուս. վար. սրբազրել փակագծում, — այդ պատճառաւ էլ նա, իբրև ոչ շիտակ ընդդիմախօս, այլ և անսպատշաճ լեզու բանեցնող, ընդմիշտ չի արժանանայ իմ կողմից ուրիշ պատասխանի «Մշակ» № 124)։

Բարդուղիմէս եպիսկոպոս հայուսկ. Գէորգեան

Ի կուսաւորչական Հայոց Սինօդն ս. Էջմիածնի՝

Յայտարարութիւն։

Ի սմին ի ստորև յառաջ բնիրեալն պատճէն յօդուածոյն իմոյ առաքեցելոյն ի հրատարակութիւն ի «Մշակ» լրագրի, ի մասին ամուսնական և ամուսնալուծական գործոց վճռահատութեան ի Սինօդի առանց նախագահութեան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, մատուցանեմ ի Դոյն՝ որպէս յաւելուած Յայտարարութեան իմոյ ի 14-ն Ապրիլի ստորոյս, որ յազագս նոյն խնդրոյ, թ. 16-ն Վեպտ. 1908 թ. ի ս. Էջմիածին։

Բարդուղիմէս եպիսկոպոս հայուսկ. Գէորգեան

Պատճէն։

Սինօդի օրէնքի ՀԱԿԱՌԱԿ ԸՆԹԱՑՔԻ Մէջ.

(Նամակ խմբագրութեան)

Էջմիածն, 22 Օգոստ.

Տարւոյս Ապրիլի 14-ին Սինօդին մատուցած Յայտարարութեամբս պրեցի, ի միջի այլոց, որ «Սինօդում առանց Ամենայն

Հայոց Հայրապետի նախագահութեան ամուսնութիւններ լուծա-
նելով՝ անսես են առնում ոչ միայն օրէնքը (Պօլօժէնիա յօդ-
ժ. իւ. լի. լէ. Խ. ԽԱ. ԽԲ.), այլ և Սենատի բացարարութիւնը...
Ճշմարիտ է, Բարձրագոյն կարգագրութեամբ և Սենատի վերջին
բացարարութեամբ կարճուած է Կաթուղիկոսի եզակի վճռահատա-
կան իրաւունքը ամուսնալուծական գործերում, ասկայն վերա-
պահուած է Նորան, և միայն Նորան, այդպիսի վճիռներին գննէ
նախագահելը»: Այս միենացնը հրատարակուեց «Մշակում», տես
№ 87:

Դորանից մի ամիս յետոյ «Մշակում» (№ 112) հանդէս ե-
կաւ Սինօդի անդամ Յուսիկ վարդապետը և, բերելով քաղուած-
ներ Սենակի (1899, 1903, 1904 թուէրի) բացարարութիւններից և
Աւկազներից, հաւատացրեց ընթերցողներին՝ թէ ամուսնալուծա-
կան գործերի վեռահատուքեան համար Սենատի բացարարութեան մէջ
Կաթուղիկոսի համաձայնութեան կամ նախագահութեան մասին նե-
ռաւոր ակնարկ անգամ չը կայ»: Ես եմ ընդգծում:

Ի հարկէ Յուսիկ վարդապետի այդ գրածը՝ Սինօդի, աւելի
ճիշդ՝ սինօդականների անուղղակի պատասխան էր իմ Ապրիլի
14-ի Յայտարարութեան, այսու ամենայնիւ ես պատասխանեցի, ի
միջի այլաց, «Իմ կարծիքը Սինօդ մանելուց յետոյ՝ հարկաւոր է
սպասել Սինօդին, եւ արժան է Սինօդին գիմել իրաւաբանների
խորհրդին: Իսկ առ այժմ դադարեցնել այդպիսի՝ ըստ իս ոչ—օրի-
նական՝ վճռահատութիւնները: Յոյս ունիմ որ Սինօդի սխալը կը
ուզգուի» (տես «Մշակ» № 124):

Խնդիրը այստեղ ապահարզանի հակառակ կամ կողմանակից
լինելում չէ իհարկէ, ինչպէս գրել եմ, այլ՝ Կաթուղիկոսական ի-
րաւանց գնահատութեան և օրէնքի ուղիղ հասկացողութեան և
հպատակութեան մէջ:

Երէկ ստացուած պաշտօնական ամսագիր «Արարատի» տար-
ւոյս Յուլիս—Օգոստոսի տեսարակում կարդում և տեսնում ենք՝
որ մեր Սինօդը ուղարկեալ շարունակում է ամուսնութիւններ լու-
ծանել: Ուրեմն եթէ չեն ցանկանում կատարուած խոշոր սխալի

վերայ պնդել, այդ գէպքում մնում է կարծել՝ որ Սինօդում չեն
կարողանում ըմբռնել Սենատի բացարարութիւնը: Եւ արդէն տա-
րակոյն չի մնում՝ որ մկրից ի վեր մերոնք չեն համկացել Սե-
նատի բացարարութիւնը, ապա թէ ոչ՝ սկզբ աղբիւր դարձրած
ամուսնութիւններ լուծանելու հետամուտ Խրիմեանը և Նորա Դի-
ւանը և կամարիլլան չէին հրաժարուի օրէնքի տուած իրաւուն-
քից մինչև այն աստիճան, որ, ինչպէս գրեց Յուսիկ վարդապետը,
«Կաթուղիկոսի կենդանութեան ժամանակն էլ, երբ Նա յաճախ
բացակայում էր Մայր Աթոռից, Սինօդը վճռում էր ամուսնալու-
ծական խնդիրներ, անշուշտ կառավարիչ սենատի որոշման հա-
մաձայն (?!), որ տուել է էջմիածնի Սինօդին ի գործադրութիւն»:

Սենատի բացարարութիւնները այս խնդրի մասին, նոյնպէս
Կաթուղիկոսական Դիւանի գործերը՝ չեն եղել և չկամ իմ ձեռ-
քում, ինչպէս եղել են և կամ Սինօդի և Անդամների ձեռքի տակ.
սակայն ժամանակին լրագրում միայն կարգացել էի և ըմբռնել
հասկացել, բայց, ինչպէս երեւում է՝ ոչ որպէս առհասարակ ըն-
թերցողները և գործի Տէրը կամ Նորա ամենանպատակ խնդրա-
գիրների շարադրողները և շրջապատը: Եւ ես իմ Յայտարարու-
թիւնը Սինօդին և Պրօկոռորին, նոյնպէս «Մշակում» (№, № 87 և
124) հրատարակուած համակներս գրել եմ՝ վստահ միանգամայն
իմ ըմբռնողաւթեան և յիշողութեան վերայ: Զէի կարողանում մի-
այն յիշել թէ որ տարին և որ համարում կարգացել էի: Նիրկայ
Օգոստոսի 12-ին միայն հազիւ ճարեցի պ. Աղապատեանի՝ մօտ
«Մշակի» 1904 թ. համարները և գտայ իմ ցանկացած բացարարու-
թիւնը—Կառավարիչ Սենատի որոշումը էջմիածնի հայ-Լուսաւոր-
չական Սինօդում ամուսնական եւ ամուսնալուծական գործերը վա-
րելու կարգի մասին» («Մշակ» Ասյն թ. № 99, 100, 101, 110):

Ես այստեղ աւելորդ եմ համարում մէջ բերել Սենատի այդ
ընդգրածակ բացարարութիւնը, որը ուսւերէն և հայերէն հրատա-
րակուած է և զոր Կաթուղիկոսական Դիւանը և Սինօդը ունին:
Սակայն խնդրում եմ, իբրև յոյժ կարևոր, որ «Մշակը» արտա-
տպէ զոնէ միայն վերջին (110) համարի մէջ տպուած մասը, որ-

պէս զի ընթերցողները կարդան և տեմսեն այժմ։ Սենատի այս Որոշումից հս հասկացել եմ և պնդում եմ, այն, որ Սինօդը ամուսնական և ամուսնալուծական գործեր կարող է վճռել ոչ այլապէս՝ եթէ ոչ Սմենայն Հայոց Կարուղիկոսի նախազանութեամբ միայն։ Բայց այս, որոշ հանդամանքներում, երբ կարող են կրօնական հացեր շօշափուել, Սինօդը ամուսնական և ամուսնալուծական վճիռներ կայացնելուս պարաւոր է առաջնորդուել Կաթուղիկոսի մակագրութեամբ կամ նախապէս ցուցման համաձայն։

Եւ դեռ այն էլ պէտք չէ մոռանալ, որ Սենատի այս «Որոշումը» կայացել է այնպիսի թիւրիմացութեան օրերում, երբ Պլենիքի ոռու կառավարչական մարդիկ պատրաստ էին Հայերիս վերաբերեալ գործերում հաշուել $2 \times 2 = 5$, Յիշեալ Որոշումը համոզիչ չի եղացրեց, այլ՝ գործադրուեց իրեն հրաման։ Ես ի Նկատի ունիմ, — բայց Սինօդում 1891 թ. Նոյեմբերի 26-ին և 1892 թ. Յունվարի 11-ին օրագրուած և արդէն հրատարակուած իմ բացատրութիւնը՝ Պուօկուլոր Խ. Կանչելու կարծիքի դէմ, — ուրիշ հեղինակաւոր օրէնսդէտների միանգամայն համոզիչ բացատրութիւնները, օրինակ՝ հանգ. Վահան վարդապետ Բատտամիանցի և Ն. Ֆագէելի (աես «Փորձ» ամսագիր 1881 թ. № V, եր. 22, և «Նոր Դար» 1900 թ. № 180): Ֆագէելի յօդուածի ոռու ընտագիրը տպուած է «ՀԿՍԻ. Մինիստ. Յուստիցի» ամսագրի մէջ 1900 թ. № 7, Սեպտ. եր. 155. վերսագիրն է — «Օ որյակէ որոյնք պրակտիկ գործարքութեան մասնակիւթեամբ առաջնորդուած հայերէն թարգմանութեանը ստորագրել է թէ. Արամեանն Բայց այժմ հարցը ի հարկէ միայն նորանում է՝ թէ ինչ է նոր Սենատի վերջին Որոշումը և ինչ աստիճան անընդուած թեամբ ի չարն է գործադրուել ցայսօր մեր Սինօդում նոյն Որոշումը։

Եթէ Սինօդը այսուհետեւ գոնէ չդադարեցնէ բռնուած օրէնսդրութեամբ ընթացը ամուսնական և ամուսնալուծական գործերի վերաբերութեամբ, կարող է պատասխանաւոր թիւրիմացութեանն արժանի պատասխանաւոր Փոխարքայի անձի դէմ, եւ այս դէմքում, թող ներուի, ասել, ոչ թէ Փոխարքան է դոհ բերուում Կովկասնեան աղ»

կուել օրէնքի առաջ, ի հարկէ և ապագայ Կաթուղիկոսի առաջ, այլ և անգաւեր համարուել Սինօդի գոյնալիսի վճիռները եւ վերջացրի։

Պատճէնը ուղղարկուած է Սինօդին և Պրոկուրօրին Շինօդի^{*}։ Բարդ. եպիսկ. Քէորդեան։

Յ Ա. Ի Ե Լ Ո Ւ Ա. Ծ

VII

«Կովկասեան հարցապետում»-ի առքիւ.

Այս աշնան Պիտուկան Դումայում Աջակողմեանները «Կովկասեան հարցապանգումն» սոսաջ բերին՝ Պուրիշկենների բերանով ամբաստանուեցին Կովկասեան աղգերը, գլխաւորապէս Հայերը, իրեւ թէ սեպարատիստական ձգտումներ ունեցողները, Ամբառանուեցին և Նորին Մհծութեան Կայսեր Կովկասեան Փոխարքայի կոմս Վարանցով-Գաշկավը և Նորին Վահմափայլութեան Դիւանի կոտավարիչ պ. Պետերսոնը, որպէս թէ Սոքա էլ Վկաշառուածք պաշտպանում են Կովկասեան աղգերին, անփոյթ մնալով ուսւ պետական շահերին։

«Փոխարքայի ջախիջախիչ բացատրութիւնը, ամբողջովին հիմնուած վաստագրերի և թուերի վերայ, աւելի քան բաւական էր պատգանձեցնելու չարտիստներին։ Վակայն պիտի չ' դադարեն, պիտի չ' լուն չարախուները, որովհետեւ, ինչպէս երևում է, գրգիռը ոչ այնքան Կովկասեան հալածուած կիսահրաւատէր աղգերի դէմ է, — ոչ, նոքա այդ աստիճան անտեղեակ. կամ միամիտներ չին, որքան Թագաւոր Կայսեր լիակատար վստահութեանն արժանի պատասխան մարդ Փոխարքայի անձի դէմ, եւ այս դէմքում, թող ներուի, ասել, ոչ թէ Փոխարքան է դոհ բերուում Կովկասնեան աղ»

*.) «Մշակը» չտպագրեց այսքան կարևոր բանը. չտպագրեց և «Գործը»։

գերին, այլ վերջիններն են զոհ տարւում Փոխարքային, Պուրիշկինների և Մենչկովսկերի յետևում մերենայողներ։ Փոխարքայի փառքի և բարի անուան չուզողները պիտի լինեն, ըստ իս:

Պարոն Շահրիարը խիստ իրաւամբ մեղաղբում է Պետական Դումայում Կովկասեան Հայերիս միակ ներկայացուցիչ Յովհաննէս Սաղաթէլեանին, որ լուել է Պուրիշկինների ամբաստանութեան դէմ, այն ինչ ուուս մարզը (Պօկրօվսկի) և թուրքը՝ ընդդիմախօսիլ են (տես «Ծակ» № 289): Շահրիարը լաւածանոթ մէկն է, բայց ինչո՞ւ անգէտ է ձեանուո՞ւմ թէ Յ. Սաղաթէլեանները, որ քամուում էին կեղտու Խ. Կանչելուն՝ իջմիածնում պաշտօն ստանալու համար, այնտեղ էլ չեն հետամուտ տեւական չաղ պաշտօններ գտնելու: Եւ ճօ միայն Սաղաթէլեանները չեն այդպէս միայն իրենց գլխի մասին մտածողներ, պ. Շահրիարին յիշեցնելու բաներ շատ կան:

Զանազան հաստատութիւններ, հասարակութիւններ, գասակարգեր, պաշտօնական անձինք, ինչպէս և մեր Կաթուղիկոսական և. Տեղապահը, բնողոքեցին Պուրիշկինների ամբաստանութեան դէմ, այլ և ջնորհակալութեան ուղերձներ մատուցին Փոխարքային: Սակայն ոք չնկատեց մոլորութեան մէջ ընկած, — կամաւ թէ ակամայ, — Պուրիշկիններին, թէ Փոխարքան և Նորա Ֆիւանը Կովկասեան նախորդ պաշտօնականների կեղտերն ու կատարած ոճիքներն են քառում, յափշտակած տարրական իրաւունքները վերաբարձնելով ու քանդած արտերը շինելով, և միժամանակ մըտածում երկրի վիճակը բարելաւելու Ռւստիւ Պուրիշկիններին մոլորութիւնից հանելու համար, և քանի որ նոքա կաշառուածներ են միստրում, ես քերում եմ այսուեղ Փոխարքային իմ ուղղած հայերէն երկու գրութիւններիս հարազատ օրինակները, միայն հարկաւոր ծանօթութիւններ յաւելացնելով: Թող. Պուրիշկինների հետ տեսնէ և աշխարհը՝ թէ նախկին աէժմը ինչեր անելու ընդունակ պաշտօնեաններ էր տալիս կովկասցիններիս:

Նորին Մեծութեան Բազարոր Կայսեր Կովկասեան Փոխարքային:

Զեր Վահմափայլութեան յիմնամեայ ծառայութեան յորելեաւնին ստիպուած եմ յիշեցնել, որ յորելեանը զթութեան և արդարութեան տօն էր՝ յԱստուծոյ սահմանեալ (տես զիրք Ղետ. ԻԵ.), և պէտք է որ լինի:

Ուղիղ 16 տարի է՝ որ մի անբարեխիղմ Պրօկուրօրի (Խրիստափոր Կանչելին) վրէժինդրութեամբ սարքուած զագոնի ամբաստանութեան հաւատ ընծայելով՝ պաշտօնանկ են արել ինձ, առանց ինձ ևս լսելու կամ զոնէ գործերից տեղեկանալու. Պրօկուրօրի՝ որի օրինազանցութիւնների, զեղծմունքների և կաշառքներ վերցնելուն արգելը եմ եղել ու էջմիածնի Սինօդում (տպագրութեամբ հրատարակած եմ մի մասը*): Նախորդ Կառավարչապետը և Նորա Օգնականը, — իրրե Կանչելու տիպի մարդ պաշտօնեաններ, — առանձին իմն հոգածութեամբ հոկում էին որ իմ գատը հրազդարակ չը գոյ, իսկ Զեր Վահմափայլութիւնը եթէ ցարդ Գլխաւոր Կառավարութեան Դիւանի գործերից չի լսել իմ դէմ մթնում կատարուած մեծակոյն ոճիրի մասին, թող բարեհաճէ տեղեկանալ զոնէ այժմ: Որ և է կասկածից գուրս արդար իմ գատի ձեռք աւնելով, որով և իմ անհատականութիւնը և պատիւը փրկելով, Զեր յորելեանը առաւել օրհնութիւն պիտի բերէ Զեր յորելեանի սահմանող Եհովայից և բոլոր աստուածավախ մարդկանցից, քան սովորական բարեմաղթութիւնները: Զեր բոլոր փառքերի անթառամ և տեսական պսակ՝ ոտնակոխ արուած անմեղութեանս արդար գատաստանի յաղթանակը պիտի գանձայ, որ պիսին կորպեցին Լաբօրին և Զօլան, եթէ միայն ցանկաք, որի համար թախանձում եմ:

Թիւրիմայութեան առիթ տուած չին լու համար՝ յաւելաւ ցնում եմ, որ չեմ դանկանում պաշտօն, քաւ լիցի, այլ միայն

*.) Տես «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ» Բ. Հատ. եր. 156—157 ծան. 2, և եր. 174—203:

արդարութիւն և իմ անհատականութեան և պատուոյ գրկութիւնը: 24 Մարտի 1908 թ. ի ս. էջմիածին:

Աղօթաբար Բարզուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան:

Նորին Մեծութեան Թագավոր Կայսեր Փոխարքայ

Վահամափայլ Կոմս Իլլարին Վարանցօվ-Դաշկովին.

Երբեք յաւելուած անցկալ Մարտի 24-ի իմ գրաւթեան յառան Զեր Վահամափայլութեան, —որպէս զի խօսքեր չհամարուին իմ գրածը՝ որ ևս արգելք եմ եղել ս. էջմիածնի Սինօգում Պրօկուրօր Խրիստոֆոր Կանչելու և նորա համախոհների օրինագաւացութիւնների, զեղծմունքների և կաշառքներ վերցնելուն և նոցա ընկերութեամբ շինած պատօղներն եմ բացել և արձանագրել տուել Սինօգում, —զաղափար տալու համար՝ ուղարկում եմ Զեղ ճենց սոյն թերթի վերայ արտագրելով երկու պատճեններ իմ Յայտարարութիւնների, որոնք 1892 թ. Յունվարի 21-ին և Փետրվարի 19-ին մտած և ստացուած են Սինօգում Տեղապահ Երեմիա Էպիսկոպոսի սեպհական ձեռքով մակագրուած*):

Ամենագործնական ապացոյց թէ իմ մասին գաղտնի գործարական ամբաստանութիւն գրողները անձնական վրէժինդրութեամբ միաբանած համարձակել են խաբել Ներքին Գործոց նախարարին որով և ի Տէր հանգուցեալ Թագաւոր Կայսր Ազէրանդը, երրորդին, նախ քան դատաստանի օրը պիտի կանխելով ծանուցանեմ ահա Զեր Վահամափայլութեանը, որ ևս անդամ էի ս. էջմիածնի Սինօգի՝ միաժամանակ և Սինօգի և Մայր Աթոռի Գանձապահնը. Գանձարանը՝ և իմ բնակարան-կացարանն եր, ուր հարիւր հաղարները — էջմիածնի ամբողջ հարստութիւնը՝ իմ ձեռքում եւ իմ տրամադրեան տակ, իբրեւ միակ պատասխանառ անձն այդ բոլորի համար Սինօգի ասած: Միւս Սինօգականը, Պրօկուրօրը և Հաղուապահը Սինօգի ըստ օրէնքի և սովորութեան՝

*) Այդ Յայտարարութիւնները անս. սորանից յետոյ:

իւրաքանչիւր ամիսը մի անգամ միայն ժողովւում էին ինձ մօտ Գանձարանը և ելեմտից մատեանները և առձեռն դրամները հաշուել — ստուգելուց յետոյ՝ կազմում էինք արձանագրութիւնները բոլոր ներկայ եղողներիս ստորագրութեամբ, որոնցից մի օրինակը պահուում էր իմ մօտ — Գանձարանում, միւսը՝ Սինօգի գործերում: Բարձրագոյն հրամանով յանկարծ հեռագրով Սինօգի անդամութիւնից պաշանանկ լինելուց եւել ամիս յետոյ եւս ես սարւեակել իմ Գանձապահ մնալ նոյն կարգով*): Կայ տարակոյս, որ ուրեմն ես կատարելագոյն և ամենավատահելի մարդը և պաշտօնեայն էի Սինօգի առաջ և նոյն խոկ իմ մասին գաղտնի ամբաստանութիւն գրողների աչքում: այլապէս՝ չէ որ Սինօգը, մասնաւանդ Պրօկուրօր Կանչելին՝ գանձի մասին պատասխանառու պիտի համարուէին: — Իսկ Սինօգում գործերը, իրբեք անվիճելի գործմէններ՝ կապացուցանեն, որ ևս եղել եմ օրէնքի և արդարութեան գրակիրը, եթէ կուգէք՝ նոյն խոկ հեղինակաւ որը ատենա-

*) 1892 թ. Ապրիլի 8-ին Տեղապահ Երեմիա եպիսկոպոսը ստանում է Կովկասեան Կառավարչապետի օգնական կամս Տատիշչելից հեռագիրը — «Ներքին Գործոց Նախարարի գեկուցման համաձայն՝ Թագաւոր Կայսրը ներկայ Ապրիլի 2-ին արձակել է Սինօգի անդամութիւնից, Բարզուղիմէոս վարդապետին», և հաստատել անդամ Սինօգի՝ Վահան և Ներսէս վարդապետներին»: Տեղապահը իւր ասածաղբութեամբ յայտնում է Սինօգին Ապրիլի 9-ին, և Սինօգը նոյն Ապրիլի 11-ին № 1074 հրամանագրով յայտնում է ինձ որ արձակուած եմ: Սորանից աւելի ոչ մի տեղեկութիւն չունի Սինօգը՝ թէ ինձ ինչու համար արձակել են: Ապա Սինօգը Յունիսի 12-ին № 1732 հրամանագրով արձակում է ինձ Գանձապահութիւնից և պատուիրում Գանձարանի հաշիւները պատրաստել և Սինօգի անդամոց ներկայութեամբ յանձնել նոր Գանձապահ Վահան վարդապետին (անդամ սինօգի), և յանձնողական ու ստացողական ցուցակները երկուքիս ստորագրութեամբ մատուցանել Սինօգին: Յանձնում եմ հաշիւները, առձեռն դրամ՝

Կան զոբծողութիւնների արջանում: Իմ մտաւոր կարողութեանց մասին Զեզ գաղափար տալու համար՝ ուղարկում եմ, առանձին թերթի վերայ, դարձեալ երկու ուրիշ պատճէններ իմ Յայտարարութիւնների—մին ի 4-ն Դեկտ. 1894 ամից յանուն Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի (տպագրութեամբ հրատարակուած*), և մին ի 14-ն ներկայ Ապրիլի յանուն Սինօդի ո. Էջմիածնի և պատճէնը՝ Պրօվուրօրին Սինօդի**), այլ և մի բրոշիր (հայ.—ռուս.) իմ գիտնական հեղինակութիւններից — «Վագարապատ և ս. Եղմիածնի և պատճէնը՝ Պահմափայլութիւն, որ պէտք էր համեստութիւնը մոռանալ:

Կրկնելով թախանձանքս՝ բանալու իմ սրբագան գատը, ուրով և փրկելու իմ անհատականութիւնը և պատիւը, ինդրում եմ կիսամիջոցների մասին չմտածել բազմադիմի հաշիւներով շատ շատերը պատրաստ են թիւրել իմ արդար դատը. այլ բարեհաճէք յանձնել և զիս և իմ գործը բաց գատաստանի: Ես օրէնքի, ար-
9890 բուրի 67 կոպ., խաղարկութեան և այլ բանկային տոմսեր՝ քառան երկու հատ (22 հ.), մուրհակներ և ձեռատոմսեր՝ 4889 ր. և 71 կոպ., և արծաթեղէնը—խաչեր, շղթաներ, տուփեր, գրգալներ և այլիալք՝ ցուցակագրուած 159 յօդուածներով: Բացի Սինօդի կողով կնքուած երեք հարիւր հաղարների՝ ձեմարանի կոչուած արժէթղթերը և բազմաթիւ թանկազին իրեղէնը: Յանձնում և հեռանում եմ Գանձատանից Յունիսի 15—18-ին. Ես տեղափոխուում եմ Վահան վարդապետի բնակարանը Միաբանութեան շարքում, իսկ նա տեղափոխուում և բնակւում է Գանձարանուու: Իսկ ես ութ ամիս յետոյ միայն հազիւ մասնաւոր նամակով տեղեկութիւն եմ ստացել, և նոյնը 1895 թ. Պետերուրգում Մկրտիչ Կաթողիկոսի հետ ստուգել թէ Տեղապահ եր. եպիսկ. և Պրօկուրօր Խ. Կանչելին ինչ են ամբաստանել իմ մասին:

*.) Տես «Ճշմարտութիւնը չի մեռնում», եր. 163—164.

**) Տես երես 28—30.

դարութեան և ճշմարտութեան հաւատարիմ և անձնուէր սպասաւորն եմ եղել, և օրէնքը, արգարագատութիւնը և ճշմարտութիւնը իրենց հերթում պարտաւոր են պաշտպանել իմ անմեղութիւնը: 19-ն Ապրիլի 1908 թ. ի ո. Էջմիածնի*):

Աղօթարար Բարդուղիմէս եպիսկոպոս Գէորգեան.

Պատճէն.

Ի լուսաւորչական Հայոց Սինօդի ո. Էջմիածնի

յԱնդամոյ Նորին յայտարարութիւն.

Պատիւ ունիմ սովոր խնդրել յԱտենէդ՝ չ'թողուլ առանց պարտուածած անօրէնութեան զՅայտարարութիւն Սինդամոյ Դորին գեր. Սարգիս եպիսկոպոսի ի 13-ն այսր Յունվարի, որով Նորին Սրբազնութիւնն յայտնելով թէ գօրազիրն Սինօդի յ 31-ն Յուլիսի 1891 ամի անցելոյ վասն թոյլաւութեան պսակի Մկրտչի երիմհանց Աղքիրմանցւոյ, յայնժամեան պաշտօնակատարն Պրօկուրօրի Սինօդիս պ. Սիմէծն Փիլիպպոսեանց (Ատենագլիլն) խարգաւանօք և կեղծեօք ածեալ է յօրինական ձև կատարման՝ արձակելով զայն, ինդրէ օրինական քննութիւն:

Առ ի լուսաբանել զհանգամանն գործոյն՝ հարկ համարիմ ասել յիմմէ կողմանէ թէ յիշեալ Երամեանցն փորձեալ է արծաթով յաջողեցնցանել զթոյլաւութիւն պսակի իւրոյ. զոր գիտեն և ամենայն Սինդամք Սինօդիս Այլ և խնդրեմ ծանուցանել փութով զվերոգրելոցաւ Նորին Գերազնութեան պ. Պրօկուրօրին

*) Սինօդի այժմեան Պրօկուրօր պ. Մէլիք-Օհանջանիանցը անցած Յունիսի 6-ին եկաւ ինձ մօա՝ Փախարքայի Դիւանից իւրեն յանձնաբարուած տեղեկութիւններ ստանալու: Եա զրեց վերցրեց Սինօդի անդամութիւնից ու գանձապահութիւնից իմ արձակումների Սինօդի հրամանագրերի համարները (Ն) և ամսաթուերը. Տակաւին ուրիշ տեղեկութիւն չունիմ:

(Կանչելին), որ բանի քանիցս ստիպողական գրութեամբք խնդրէ յԱմենամեծ Սինոգի զգալիճանական որոշումն ըստ գործոյն պատկի Երամեանցի: № 3. ի 21-ն Յունվարի 1892 ամի, ի ս. Էջմիածին*):

Անդամ Սինոգի Բարդ. վարդապետ

Պատճեն

Ի լուսաւորչական Հայոց Սինօգն ո. Էջմիածնի
յԱնդամոյ Նորին յայտարարութիւն.

Սովորութիւն մանաւանդ թէ օրէնք են Կուհեղական Առենից նախ որոշ կացուցանել զաւորո և ժամու տահնական զոր-

*) Որ այդ 5 հազարանոց չհասի «միջնորդի խարանք»-ն էր յայտնուել էր. որ Պրոկ. պաշտօնակատարը «խարդաւանօք» պատուգ էր շինել այդ պասկը յաջողեցնելու համար՝ գորանց մասին իմ և Սեղբակեանի Սինօգ մանելուց առաջ օրադիրներ կան Սինօգում: Իսկ մեր անդամութեան ժամանակ՝ Սեղբակեանի մասնակցութեամբ և ձեռքով մի երկրորդ պատօգով սուս վկայութիւն շինեցին, որով մտածել էին՝ նախ՝ արդարացնել Պրոկուրօրի պաշտօնակատարին, և երկրորդ՝ հետեարար՝ Յուլիսի 31-ի անկանոն օրադիրը աւաբած համարուելով թոյլատրել յօդուս պ. Կանչելու, Երամեանցի ամբարշաւական պսակը, Սակայն, յայտնի է, այդ պատօգն էլ իմ ձեռքով բացուեց և արձանագրուեց Սինօգում, որից յետոյ հազիւ թէ մոռացան Երամեանցի պսակը և 5 հազար ըուբլին, մտածեցին գոնէ իրենց գլուխը ազատել և 1892 թ. Փետրվարի 28-ի անկանոն և սառութեաններով լի օրագրով փանցրին այդ գործը Սինօգից՝ իմ ձեռքից: Այդ օրագրով գործը յանձնեցին Պրոկուրօրին՝ իրը թէ քննելու պատօգների և կաշորի վերաբերեաները. Պրոկուրօրը գուրս տարաւ գործը Աինօդից և բնացրեց մինչեւ այսոր, ոչ Սարգիս եպիսկոպ. և ոչ ինձանից բացառութիւն չուզեց՝ որ հաստատէինք պատօգներն էւ կաշորը էւ Փախցրին, այս, հակառակ երեք Անդամներիս զիմադրութեան:

Ճողութեանց. երկրորդ՝ նախակարգել—նշանակել զօր և ժամանակ վճռահասաւթիւն իւրաքանչիւր գործոյ. երրորդ՝ ժուծաւնել յորագիրս զիարծիս Անդամոց՝ ի գեպս տարակարծիս մինելոյ: Ուստի խոնարհաբար խնդրեմ սահմանել օրագրով՝ պաշտել զայս կարդ և ի միջի մերում ի Սինօգիս, զի մի օր-աւուր յանելցին վնասակար եւ տնկանան գուծողութիւններ՝ զօս աւելորդ համարիմ բուելոյ: Այլ և խնդրեմ սահմանել ընդ նմին՝ զի ոչ մի գործ գնաւատեսցի վախճանական կերպիւ յորն իսկ ծանուցման այլ՝ ի յիտագայ ժողովի: № 6. ի 19 Փետրվարի 1892 ամի, ի ս. Էջմիածին*):

Անդամ Սինօգի Բարդ. վարդապետ.

Այսուեղ հարեանցի գուղափար տալու համար միայն թէ ինչու Պրոկուրօր Խանչելին այն առափան թշնամացաւ ինձ, յիշեմ՝ որ նա հետամուտ էր Աղ. Թայքիրեանցի 30 հազարանոց ամուսնալուծութիւնը թոյլատրել Սինօգով, որի համար միջնորդն էր Գաւառապետ Գ. Խանաղեանցը (Եր. 27): Հետամուտ էր Տղիփիսեցի Խաչառու Էլարեանցի և Աղքիրմանցի Մկրտիչ Երամեանցի 5 հազարանոց չհաս պսակները թոյլատրել՝ դարձեալ Սինօգով (Եր. 46, ծան.): Էլարեանցը անձամբ եկած էր, իսկ Երամեանցի միջնորդն էր Երևանցի պ. Պատիլ Եղիազարեանցը, Երկու անգամ հէնց իմ սերկայութեամբ միջնորդում խնդրում էր Եղիազարին փողերը խոստանալով հասպերձ: Այդ «միջնորդի խարանք»-ն էր յիշուած արձանագրուած են Սինօգի 1891 թ. Սեպ. 9-ի և 22-ի օրագրում, միւր՝ Սինօգի անդամութիւնից առաջ: Այդ և միւսները յիշում է և Սուրբիաս արքեպիսկոպոսը՝ անցած տարի հրամարակած իւր մի դրբի մէջ: Կաշառքով լինելը և պատ-

*) Սինօգին այգակը ի կարգ եմ հրաւիրում՝ Տեղապահի, Սեղբակեանի (Երբեմն էլ Աղուանեանցի որին խոստացել էին Տըփիսի թէմի Առաջնորդութիւնը), Ատենապետի և Պրոկուրօրի տասնեակ ապօքինի և խարդաղութեամբ կատարած գործերը բռնելուց յետոյ ի հարկէ:

լոգները բանալուցս յետոյ (տես իմ Յայտարարութիւնը և Սինօդի օրակիրը 30-ին Յունվարի 1892 թ.), Տեղապահի, Սեղրաշեանի, Առաջանքանի և Պրոկուրօր Կանչելու համար կաշու հարց դարձաւ իմ ձեռքից ազատուելու հոգու, և նախ գործը փախցրին Սինօդից (եր. 46 ծան.)։ —Պրոկուրօր Կանչելին նոյն իսկ Սուրբիս և Ներսէս Եպիսկոպոսներին անդամութիւնից արձակել և աքսորել տալու ցոյց տուած եռանգում՝ առաջնորդուն էր յատկաւէլու այդ և այդպիսի փողերը գանձելու տեհնչանքով։ Նորա Կանչելուն բաժին չէին հանում, այն ինչ Սեղրակեանը և Տեղ. Երեմիան՝ ամբողջովին թողնում էին նորան, «շահնցնել պէտք էր», և պ. միշնորդին*).

Բացի սորանք, Սեղրակեանը, Տեղապահը և Պրոկ. Կանչելին ցանկանում էին թոյլատրել որ Գր. Արծրունին պսակուէր Բժ. Քօչարեանցի արձակած տիկին Մարդիամի հետ։ Սինօդի Առանձին Յանձնարութիւնց պաշտօնեայ և թարգման Ռուբէն Սէլիք Աղամեանցը, տիկին Մարդիամի խնամքն (քենու տալլը), Տեղապահի հետ և սենեկում երբ ինձ համոզում էին որ համաձայնեմ թոյլատրել Գր. Արծրունու պսակը, պատասխանեցի. «Վեր-

*) Սինօդի Անդամները խորհել էին այդ հինգ հազար բուրլովը ուղարկել Տիգրան սարկաւագին արտասահման ուսանելու. յետոյ յաւելացաւ և Ստեփան սարկաւագը (Տիգրայը և Բենիկ վարդապետը), Սինօդի այդ օրագիրը տարւում է Տեղապահ Երեմեայի սենեկը, այնտեղ էլ թաշում։ Այդ ժամանակ բացւում է պ. «միշնորդի խարանքները» որ փողերը ուղում են Կանչելու հետ կիսել, և Սարգիս Եպիսկոպոսը «արդար բարկութեամբ» ջնջում է իր ստորագրութիւնը Յուլիսի 31-ի (1891 թ.) անկատար օրագրի մէջ, որով պիտի թոյլատրուէր Երեմեանցի պսակը, հայէն, հայէն. Լսում է «Մշակի» զեկավար պ. «Վերինը»։ Բայց դնու շատ բաներ ունին լսելու, որպէս զի հասարակաց դատաստանի առաջ հարկադրուին «մեղայ» ասել, և գաղարին ամբոխամիտներին խաբել մոլորեցնելուց։

ջապէս, «և որ զարձակեալն առնու շնայ» — Քրիստոնի խօսքն է, ոչ թէ Հայրապետների կամ եկեղեցական ժողովների կանոն...»։

Իսկ Գր. Արծրունին և նորա «ոյնակալէզները», «որրերը» և «համախոնները» կատաղի թշնամիներ դարձան ինձ թէ այս և թէ Տփիսի թեմի 1892 թ. Մարտի 8-ի պատգամաւորական օրինաւոր ընտրութիւնը թոյլ չտալուս համար որ Սինօդը բեկանէր (եր. 9, ծան.), օրինաւոր՝ քան Երեանի 1908 թ. Աեպտ. 21-ի թիմ. պատգամաւորի ընտրութիւնը, զոր Սինօդը ճանաչեց օրինաւոր (եր. 11, ծան.), Օրինաւոր՝ ինչպէս 1897 թ. Տփիսի Քաղաքավութիւններին, ուշ չգարձնելով Քալանթարների օյինը բազում իշխանութիւնը, ուշ չգարձնելով Քալանթարների օյինը բազանքանը իշխանութիւնը, ուշ չգարձնելով Քալանթարների օյինը բազանքանը առինաւոր և հաստատեց (տես «Արձագանք» 1897 թ. № 116, 117, 126), և այլն. Բեկանեցին, ընթերցող, չէնց իմ պաշտօնանկութեան հեռագիրը Սինօդում օրագրուելու օրը, էլ չկար Բարգուղմէոս վարդուպետը։ Իսկ Մշակի «Ասիացին» (Գր. Արծրունին) հենց այդ օրը, յետոյ սարսափելի հայնոյանքներ և զրագարտութիւններ կարդաց իմ հասցէին։ Հազիւ թէ 15 օր առաջ էր, որ Տեղապահը լճակի եղերքին, նոյն անքածան Ռուբէնի հետ, հանգիպելով ինձ բոնեց երկու ձեռքս և առաց. — «Հայրապետը, խնդրում եմ, համաձայնէք բեկանել Տփ. Թեմի Պատգ. ընտրութիւնը. Եթէ կուզէք՝ վճռի մէջ զրենք որ ոչ Գր. Արծրունուն ընտրեն և ոչ Ար. Յովհաննիսեանին, իբրև կուսակցութեանց պարագայուխներ»։

— Վրբազն, ժողովրդի իրաւունքն է, ում ուղում են՝ թողը ընտրեն։ Բեկանելու համար դուք ինձ տուէք միայն հիմք, ես համաձայնիմ բեկանել, Զեր ձեռքն էլ համբուրեմ։

Ուրեմն. Հայրապետը, այդ խնդրում ձեր իրաւացի պատճառարանութեանը ոչ ոք չի կարող հակառակել. բայց դէ ժողովուրդ է, մեղք են, պէտք չէ յուսահատեցնել։

Պարհն, մի կողմը ժողովուրդ է, միւս կողմը ժողովուրդ չէ։ Մեզ անհրաժեշտ է արդարութիւնը պահել։

Սինօդում ես ոյժէի և հեղինակութիւն արդէն, եթէ մի-երկու օրով բացակայում էի, շատ ու քիչ կարելոր զործ պատահած ժամանակ՝ Անդամները, բացի Եեղբակեանը և Տեղապահը, ասում էին. «այդ թողէք մնայ՝ մինչև հայրութրը գայ»: եթէ պատահէր որ նախըան Ատենի արձակուելը կամենայի դուրս ելնել, գիմում էին ինձ, քանի անգամներ, Աղուանեանց, Տէր-Գասպարեանց և Դաւթեան եպիսկոպոսները. «Հայր սուրբ, խնդրենք առէք թէ այս (ինչ) զործի համար ինչպիսի վճռո պէտք է կայացնել ապա գընացէք»: Ողջ է պատրօգնել շինող Ատենագլիրը (Ա. Փ.), որը միշտ ներկայ էր Ատենում: Լուսում իմացում էր ի հարկէ և Սինօդի Դիւանատանը և դուրսը: Եեղբակեանի մի քանի բարեկամներ, օրինակ՝ Մատթէոս (Մաթվէ) Տէր-Պատրոսիւն, Յովհաննէս Աաղաթէրիան և այլը, իմ պաշտօնանկ լինելոց հազիւ 15—20 օր առաջ, խնդրում ուղարկում են ինձ մօտ Մկրտիչ Ենդիրարեանցին և նորա միջնորդութեամբ խնդրում են ինձ. «Գիտենք որ դուք Սեղբակեանին այլս բուէ չէք տայ, զննէ առաջուայ բարեկամութեանը խնայէք, նորա վարկը մի ձգէք Սինօդում, ընտրութիւնը մօտենում է»: Այսպէս խնդրել էր ինձ անձամբ Յ. Աաղաթէրիանը մի քանի օր առաջ *): Երկու անգամ եկաւ խնդրեց և Տփիխսից պատգամաւոր ուղարկուած Գաբրիէլ (Գաբօ) Միրզոյեանցը որ հաշուուիմ Սեղբակեանի հետ: Ինչպէս սորանց, նոյնպէս Մ. Ենդիրարեանցով պատասխանեցի. — «Ես Սեղբակեանին թշնամի չեմ, բարեկամանալ՝ չեմ կարող, ճանաչեցի: Փոխանակ ինձ խնդրելու, թող Կարան խնդրեն՝ որ ինքն իւր վարկը չձգէ: Ե՞ս նորան ասացի որ Գանձարանի 100 բուրլին տար իւր խնամուն: Ե՞ս նորան ասացի որ 3 հազար բուրլի աշխարհական ծախսարանների տալուց յետոյ (ռոճ. և ապրուստ), Սինօդի Ատենում բնեութեամբ ապա-

*) Սա, Սեղբակեանի արած կեղտութիւնների մասին համոզուելով հանդերձ, ինչպէս և չկարողանալով կոնդկել շինած պատճեռը, խնդրում համոզում էր. «Ասա մի ժամանակ էլ խուսի, և հետը բարըշի»: — էլ առանց խփելու մաս չմնաց. պատասխանեցի:

ցուցուած գողին գարձեալ ծախսաբար վերահաստատէր *), Ե՞ս նորան ասացի որ Երամեանցի պսակի գործի մէջ պատլօգ չինէր: Ե՞ս նորան ասացի որ հեռագրէր Մոզդոկցի գեն. Խոսրովեանցին. «Որ բանը եկաւ փողի՝ դիմեցէք միւսներին» (Անդամներին): Ե՞ս նորան ասացի որ Ատենում ատէր. «Կը հեռագրէնք՝ որ Տփիխսի Նահանգապետի օգնականը նախագահէ նոր ընտրութեանը»: Ե՞ս նորան ասացի, որինքը Տեղապահի հետ, միւս 3—4 Անդամներից գաղտնի, Սինօդի անունով վճիռներ հատանէր և գործադրէր: Ե՞ս նորան ասացի որ գաղտնի և ապօբնի միջամտութեամբ իւլ-ձձէր այսպէս Տփ. թեմի պատգ. ընտրութեան գործը. և այն և այն: Այդպիսի զեղծմունքների համակերպիլ չեմ կարող, իսկ նկատել և ի հարկին դիմագրի՝ պաշտօնիս պարտաւորութիւնն է: Այն, թող ինդրեն Սեղբակեանին՝ որ ինքն իւր վարկը չձգէ»:

Դորանից հազիւ 10 օր յետոյ, Մարտի 27-ին, Սեղբակեանը, Ատենապըրի հետ նոյն ընտրութեան գործում այնպիսի օրէնքի հակառակ բան արեց և խօսեց՝ որ արձանագրութիւն կազմեցինք միւս չորս Անդամներս—Աղուանեանց, Տէր-Գասպարեանց, Դաւթեան եպիսկոպոսները և ես: Սեղբակեանը և Տեղապահը իսկոյն վագեցին կանչելու տունը՝ երբ մենք արձանագրութիւնն է-ինք գրում, և յետոյ գիշերը, այլ և միւս առաւտար խիստ վաղ... իմ անդամութեան ժամանակ (6 ամիս) Սինօդականներին, առանց բացառութեան, Ատենապըրին և Կանչելուն՝ քշում էի ինչպէս մի սիւրու զագերին քշում են: Տեսէք գործերը, կամ հէնց այդ վերի Յայտարարութիւնը (եր. 46-47) որը շատ բան է ասում՝ քան թէ այստեղ հնար կը լինէր պատմելու: Բայց իմ թշնամիները տմարդութեամբ մութ անկիւնից գնդակ են արձակել գաղտնի ինձ ամբաստանել են «հոգեկան հիւանդ», բարձր պատշաճաւոր իշխանութիւնը իւր կողմից օրինական վերահասութիւն չարած՝

*) Այդ գողին, Ներսէս վարդապետ, Փարպի գիւղի նախկին այրիացած տէր-տէին, առաջարկել էին Սինօդի անդամ, իրենց ընկեր, և հաստատուեց. ահս եր. 43. Ծան.:

Խարուել և խարել են Կայսր Ալբանուդը ելլորդին և պաշտոնանկանել անել տուել ինձ: Ամբաստանութիւնը և վճռի բնվանդակութիւնը թագրել են և Սինօդից և ինձնից և աշխարհից, ինարկէ պատասխանատութեան և դատաստանի երկիւղից: Ներքին գործոց Մինիստրութեան Օտարդաւանութեանց Դեպարտամէնտի կառավարէց Մասաւովը 1895 թ. Պետքը բուրգում, և ապա Եջմիածնում, իշ. Աւատումնիւ հնտ Կաթոլիկոսին այցելութեան եկած ժամանակ (1896 թ.) խոստովանեց — «գրագրութեամբ սխալեցրին խարեցին Մինիստրութեանը»:

Մենշիկովները և Պուրիշկիչները ցանկանում են Կովկասին կանչելիների տիպի պաշտօնեաներ...

Բարդուղիմէս եպիսկ. Գէորգիան (Ճուղուրիանց):

2 Յունիարի 1909 թ.

ս. Եջմիածն:



Վ Ր Ե Գ Ը Ն Ե Ք

եր.	առդ.	սխալ	ուղիղ
10,	10.	ազնուապէս,	ազգուապէս,
26,	11.	ծայրահեղ	ծայրահեղ
,	22.	ալ պնդէ	ալ կը պնդէ
31,	14.	այն բացատք.	Մենատի այն բացատք.
36,	12.	Մենակի	Մենատի
49,	16.	այդ օրը յիսոյ	այդ օրը, և յիսոյ,
,	22.	և Ա.ր.	և ոչ Ա.ր.
51,	30.	տէր-տէրին,	տէր-տէրին,
52,	8.	սխալեցրին—խարեցին սխալեցրին (—խարեցին)	